

A decorative graphic on the left side of the page features a light blue winding path that starts from the top left and ends at the bottom right. Along this path are several circular icons: three gears of different sizes, a lightbulb above an open book, a graduation cap above a rolled diploma, a school building with a clock tower, and a sun-like gear. The background is a solid light blue.

**ԱՐՏԱՔԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

գեկույց

Երևան 2023



Funded by
the European Union



Ձեկույցը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈՒՄ)» ծրագրի շրջանակներում Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՅԿ) կողմից:

Ձեկույցի բովանդակությունը բացառապես Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետը:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

զեկույց

Ծրագրի ղեկավար՝ Գայանե Բաղդասարյան
Հեղինակ՝ Հայկ Բեջանյան
Համահեղինակ՝ Արամ Հովհաննիսյան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0002, Սարյան 12 փող., 5-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 569589, 569689
Էլ. հասցե՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ISBN 978-9939-1-1792-8



9 789939 117928

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	13
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	14
1. «Հանրակրթություն» ծրագիրն ու հաշվետվողականության կարգավորումները	14
1.1 Ծրագրի բովանդակությունը և հիմնական ցուցանիշները	14
1.2 Ծրագրի բյուջեն և հաշվետվողականության համակարգը	16
2. Հաշվեքննության գործընթացի օրենսդրական կարգավորումները և խնդիրները	21
2.1 Հաշվեքննության կարգավորումներն ու մեխանիզմները	21
2.2 Հաշվեքննության ծածկույթը և շրջանակը	23
2.3 ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունները և ներկայացված առաջարկությունները	24
2.4 Հաշվեքննության հետհսկողական գործընթացը	27
3. ՀՀ կառավարության և խորհրդարանի դերը հաշվետվողականության ապահովման գործում	31
3.1 ՀՀ կառավարության մասնակցությունը հաշվետվողականության գործընթացին	31
3.2 ԱԺ վերահսկողության դերը հաշվետվողականության գործընթացում	36
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	42
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	45
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	47
ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Հանրակրթություն» ծրագրի հիմնական ֆինանսական ցուցանիշները	50
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հանրակրթություն ծրագրի միջոցառումների արդյունքային ցուցանիշները	52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունները	57
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացված այլ գրավոր տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տեղեկություն	59
ՀԱՎԵԼՎԱԾ 5. 2020-2022թթ. ընթացքում ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունները	61
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Տեղեկատվության ստացման նպատակով կիրառված հարցաթերթերը	62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԲԳԿ	Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ
ԹԻՅԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՏՄ	Կրթության տեսչական մարմին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՎԾ	Պետական վերահսկողական ծառայություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Յուրաքանչյուր ժողովրդավարական երկրի համար հաստատությունների հաշվետվողականությունն ունի առանցքային նշանակություն թափանցիկության, արդյունավետ կառավարման և պետական կառույցների հանդեպ վստահության համար: Հաշվետվողականության դերն առավել կարևոր է այն ոլորտների համար, որոնք հիմնարար ու ռազմավարական նշանակություն ունեն պետության զարգացման համար, ինչպես նաև հանրային միջոցների ծախսման տեսանկյունից զգալի կշիռ են զբաղեցնում պետական բյուջեի ծախսերի մեջ, ինչպիսին է հանրակրթությունը:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հանրակրթության ոլորտի հաշվետվողականության գնահատման զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից իրականացվող և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈԻՄ)» ծրագրի շրջանակներում:

Հետազոտության նպատակն է արտաքին պետական հաշվեքննության զեկույցների հիման վրա գնահատել ՀՀ հանրակրթության ոլորտի հաշվետվողականության համակարգը, բացահայտել հաշվետվողականության մեխանիզմի հիմնական խնդիրները և մատնանշել բարելավման ուղիները:

Հետազոտությունն իրականացվել է 2023 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին և վերաբերել է «Հանրակրթություն» ծրագրի 2020-2022 թվականների հաշվետվողականության գործընթացին: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են տվյալ ծրագրի բովանդակությունն ու հաշվետվողականության մեխանիզմները, հաշվեքննության գործընթացի օրենսդրական կարգավորումները և առկա խնդիրները, ինչպես նաև ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) և այլ մարմինների դերը հաշվետվողականության ապահովման գործում:

Գնահատման համար օգտագործվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի (ՀՊ) կողմից իրականացված հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները, օրենսդրական կարգավորումների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև հարցումների հիման վրա հավաքագրված տեղեկատվությունը:

Իրականացված հետազոտության շրջանակներում բացահայտվել են հաշվետվողականության գործընթացի մի շարք խնդիրներ և օրենսդրական բացեր, որոնք էական ազդեցություն են թողնում հանրակրթության ոլորտի հաշվետվողականության վրա: Մասնավորապես՝

- Խնդրահարույց է հաշվեքննության ծածկույթի սահմանումը: ՀՊ կողմից իրականացվող հաշվեքննությունները հիմք են ընդունում իրականացման համար լիազոր մարմին՝ որպես ծրագրերի կատարողի ներկայացրած հաշվետվությունները, մինչդեռ ՀՀ պետական բյուջեն կազմվում և ԱԺ կողմից հաստատվում է ըստ պատասխանատու գերատեսչությունների, և պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման

Ժամանակ գերատեսչություններն ԱԺ-ին զեկուցում են որպես պետական բյուջեի ծրագրերի իրականացման պատասխանատուներ: Ծածկույթի այսպիսի ընտրությամբ սահմանափակվում է հաշվեթևության շրջանակը, իսկ ներկայացված արձանագրումները և եզրահանգումները վերաբերելի են դառնում բյուջեի միայն որոշ մասին: Ավելին, ֆինանսական հաշվեթևության մեթոդաբանության համաձայն, օբյեկտների ընտրությունն իրականացվում է ոչ թե ծախսերի ամբողջական ծավալի համար, այլ էականության սկզբունքի հիման վրա՝ ներառելով միայն «Էական» համարվող ծախսերը: Նույն մոտեցումը կիրառվում է կատարող մյուս մարմինների (Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզապետարաններ և Պաշտպանության նախարարություն) ենթակայությամբ գործող կազմակերպությունների նկատմամբ հաշվեթևության իրականացման դեպքում:

- Պետական բյուջեի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների և ֆինանսավորման ծավալների միջև կապը խզված է: Ծրագրային բյուջետավորման գործող համակարգի և հանրակրթության ծրագրի ֆինանսավորման առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ ցուցանիշների ուղիղ կապը երբեմն հիմնավորված չէ, մինչդեռ դրանք հիմք են ինչպե՛ս ծրագրի ֆինանսական պլանավորման, այնպե՛ս էլ արդյունավետության գնահատման համար: Ընդ որում՝ արդյունքային ցուցանիշների հավաստիությունն ու ամբողջականությունն առանցքային դերակատարում ունեն հաշվետվողականության համակարգի լիարժեք գործունեության համար:
- «Այլ տեղեկատվության» կամ «այլ գրավոր տեղեկատվության» հրապարակման վերաբերյալ օրենսդրական որևէ կարգավորում նախատեսված չէ, ինչը սահմանափակում է հանրության կողմից հաշվեթևությանն առնչվող բավարար և համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:
- ՀՊ կողմից հետհսկողական գործառույթի իրականացումը լիարժեք չէ օրենսդրական մակարդակում դրա ամրագրված չլինելու հետևանքով: Թեև ներքին իրավակարգավորումներով ՀՊ կողմից նախատեսված է հետհսկողության վերաբերյալ տեղեկության հավաքագրման համակարգ, իսկ շարունակական հաշվեթևությունների դեպքում՝ նաև հետհսկողություն իրականացնելու որոշակի հնարավորություն, սակայն ընթացակարգերի ոչ լիարժեք լինելը հանգեցնում է ՀՊ հետհսկողական գործառույթի թերի իրականացմանը կամ առհասարակ չիրականացմանը:
- ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրանցում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունն ԱԺ ներկայացնելուց հետո ընթացք չեն ստանում:
- Բավականին ցածր մակարդակի վրա է ՀՊ ընթացիկ եզրակացությունների և հաշվեթևությունների արդյունքների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը: Առկա չեն հանրային իրազեկման այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ ԶՀԿ-ների հետ քննարկումների կազմակերպումը, մամուլի ասուլիսները և/կամ հաղորդագրությունները, ինչի արդյունքում սահմանափակվում է հաստատությունների նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, հանրությունը հրապարակված ընթացիկ եզրակացություններին վերաբերում է ոչ թե որպես քաղաքականության բարելավման փաստաթուղթ, այլ որպես վերջնական ավարտված գործընթաց, ինչը նաև զսպում է գործադիր մարմնի նկատմամբ հանրային պահանջի ձևավորումը ներկայացված առաջարկությունները և բարեփոխումները կյանքի կոչելու համար:

- Աժ հանձնաժողովները չունեն սահմանված հստակ մեթոդաբանություն հանձնաժողովներում քննարկման համար հաշվեթևությունների ընտրության համար, և հանձնաժողովների անդամներն իրենք պետք է ընթացիկ եզրակացությունների ուսումնասիրությունից հետո հանդես գան նման նախաձեռնությամբ: Քննարկվող նյութի ընտրության մեթոդի բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ պետության համար առանցքային կարևորության հարցեր պարունակող եզրակացությունները դուրս մնան քննարկումներից:
- Աժ հանձնաժողովների նիստերում ՀՊ ընթացիկ եզրակացությունների քննարկումներին չեն հաջորդում գործողություններ: Բացակայում է դրանց արդյունքում ձևավորված առաջարկությունների և նկատառումների իրականացման նկատմամբ հետագա հսկողական մեխանիզմը, որը զգալիորեն նվազեցնում է նույնիսկ իրականացված սահմանափակ քննարկումների արդյունավետությունը: Թեև Աժ հանձնաժողովների համատեղ նիստն ուղիղ եթերով հեռարձակվում է և հանրության ու զանգվածային լրատվամիջոցներին հնարավորություն է տալիս տեղեկանալ և հետագայում հետամուտ լինել առանձին հարցերի, սակայն նիստի ընթացքում կատարված եզրահանգումները կամ ներկայացված գործողությունները որևէ կերպ չեն փաստագրվում և հետագա կիրառություն չեն ստանում:
- ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրանցում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունը ՀՀ կառավարություն ներկայացնելուց հետո, ի տարբերություն Աժ-ի, իրավական գործընթացներ առհասարակ նախատեսված չեն, և վարչապետի աշխատակազմը, ելնելով տեղեկատվության բնույթից, յուրաքանչյուր դեպքում պետք է առանձին որոշում կայացնի հետագա քայլերի վերաբերյալ: Կառավարությունը հանդիսանում է նաև լիազոր մարմնի վերադասն ու հսկողության իրականացման պատասխանատուն, ուստիև նման ընթացակարգերի բացակայությունը զգալիորեն բարձրացնում է առաջարկությունների չիրականացման կամ բարեփոխումների դանդաղեցման ռիսկերը, ինչպես նաև մեծացնում քաղաքական հայեցողությամբ վերահսկողություն իրականացնելու հավանականությունը:
- Կառավարության գործիքակազմում հստակ ընթացակարգերի բացակայությունը սահմանափակում է նաև ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման նկատմամբ գործադիր մարմնի (Կառավարություն և Վարչապետի աշխատակազմ) կամ նրան ենթակա ՊՎԾ-ի կողմից շարունակական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունները:
- ՊՎԾ-ն իր ուսումնասիրությունների պլանավորման և իրականացման ընթացքում հաշվի չի առնում արտաքին վերահսկողություն իրականացնող այլ կառույցների (այդ թվում՝ ՀՊ և ԿՏՄ) ծրագրերը, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կատարված բացահայտումներն ու եզրահանգումները, ինդիքի չի դրվում փոխլրացնելու դրանք՝ ոլորտի կառավարման առումով առավել համակողմանի և արդյունավետ բարեփոխումների հանգեցնելու նկատառումով:

Ելնելով հետազոտության հիմնական արդյունքներից՝ բացահայտված խնդիրների լուծման նպատակով կատարվել են հետևյալ առաջարկությունները.

Առաջարկություններ

3.3 հաշվեքննիչ պալատին

- ՀՊ կողմից պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների իրականացման ժամանակ հաշվեքննության ծածկույթը սահմանել գերատեսչության բյուջեն՝ ոչ չե որպես զուտ կատարողի, ա՛յլ որպես բյուջեի ծրագրերի իրականացման պատասխանատուի: Նման մոտեցումը թույլ կտա եզրակացություններ կատարել ամբողջ պետական բյուջեի մասին, իսկ ստացված արդյունքները համադրելի կլինեն պետական բյուջեի հրապարակվող հաշվետվության, ինչպես նաև ԱԺ ներկայացվող հաշվետվությունների հետ:
- Վերանայել «Հանրակրթություն» ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների համակարգը՝ այն համադրելի դարձնելով ծրագրի նկարագրի (անձնագրի) և դրանում արտացոլված միջոցառումների նպատակներին, ինչպես նաև դարձնելով առավել ամբողջական՝ ընդգրկելով ամբողջ հանրակրթության ոլորտի ցուցանիշները:
- ՀՊ կողմից պաշտոնական կայքում եզրակացությունների հրապարակումից բացի հրապարակել նաև ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկությունները, որը հանրությանը կներկայացնի բավարար և համապատասխան տեղեկատվություն՝ հնարավորություն տալով նախաձեռնելու և իրականացնելու հանրային վերահսկողության միջոցառումներ:
- Մշակել և իրականացնել միջոցառումների ծրագիր ՀՊ եզրակացությունների և հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով քննարկումներ ԹՀԿ-ների հետ, հանդես գալ ասուլիսներով, տարածել հաղորդագրություններ և այլն:

3.3 Ազգային ժողովին

- Մշակել և ներդնել մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրա վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունն ԱԺ մշտական հանձնաժողովների նիստերում քննարկելու համար կատարել նպատակային ընտրություն՝ բացառելով կարևոր հարցեր և լուծումներ պարունակող հաշվեքննությունները քննարկումների օրակարգից դուրս թողնելու, ինչպես նաև քաղաքական հայեցողությամբ վերահսկողություն իրականացնելու հավանականությունը:
- Օրենքով սահմանել ՀՊ կողմից հետհսկողության գործընթացը՝ որպես հաշվեքննության բաղկացուցիչ մաս՝ այն համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, ինչը հնարավորություն կընձեռի նախատեսելու մեխանիզմները,

ընդլայնելու հսկողական գործիքակազմը և բարելավելու հաշվեքննության արդյունավետությունը:

- Ներդնել ԱԺ նիստերում իրականացված քննարկումների արդյունքների հետագա կիրառումն ապահովող համակարգ, որը թույլ կտա ձեռք բերված պայմանավորվածությունները, օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ եզրահանգումները, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկները դարձնել գործողությունների ծրագիր՝ դրա իրականացման նկատմամբ կիրառելով խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները:

3.3 կառավարությանը

- Մշակել և ներդնել հստակ մեխանիզմներ, որոնք կսահմանեն Կառավարության կողմից ՀԴ ընթացիկ եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությունը ստանալուց հետո ժամանակին և լիարժեք իրականացվող հսկողական գործընթացներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետի հանձնարարական՝ ուղղված ՊՎԾ-ին՝ իրականացնելու ընթացիկ հսկողություն հաշվեքննության ենթարկված կազմակերպության կողմից ներկայացված գործողությունների ծրագրի իրականացման նկատմամբ, իսկ գործողությունների ծրագրից շեղման կամ ստանձնած պարտականությունների չկատարման դեպքում՝ պատասխանատվության միջոցների կիրառում:
- Ներդնել մեխանիզմ՝ ապահովելու համակարգված մոտեցում, որը թույլ կտա ՊՎԾ-ին իր տարեկան ուսումնասիրությունների ծրագրերը համադրել այլ մարմինների (այդ թվում՝ ՀԴ և ԿՏՄ) աշխատանքների հետ, այլ ոչ թե յուրաքանչյուր անգամ ուսումնասիրությունը կամ վերահսկողությունն իրականացնել առանձին հանձնարարականի հիման վրա՝ առանց առնչվելու պետությունում գործող ընդհանուր համակարգի այլ կառույցների գործողություններին:

Յուրաքանչյուր ժողովրդավարական երկրի համար հաստատությունների հաշվետվողականությունն ունի առանցքային նշանակություն թափանցիկության, արդյունավետ կառավարման և պետական կառույցների հանդեպ վստահության համար:

Հաշվետվողականության համակարգը համարվում է ինչպես ժողովրդավարական կառավարման, այնպես էլ կայուն զարգացման գործընթացի հիմնական բաղադրիչներից, որը թույլ է տալիս հավասարաչափ հաշվի առնել հասարակության բոլոր շերտերի շահերը¹: Մեկ այլ բնութագրմամբ՝ հաշվետվողականությունը վերաբերում է գործողությունների և մեխանիզմների ավելի լայն շրջանակի, որտեղ բաղաբացիները կարող են ներգրավվել պետությանը հաշվետու պահելու գործում՝ ներկայացված լինելով հանրային պաշտոնյաների և ծառայություն մատուցողների միջոցով, ինչպես նաև կառավարության, բաղաբացիական հասարակության, լրատվամիջոցների և այլ հասարակական դերակատարների այն գործողություններին, որոնք խրախուսում կամ դյուրացնում են այդ ջանքերը²:

Ժողովրդավարության սկզբունքների վրա խարսխված կառավարման համակարգով պետությունների պարագայում անխուսափելիորեն առկա է հանրային հարստության (ունեցվածքի) կառավարման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ հանրային մեծ պահանջարկ³: Այս պահանջարկը բավարարելու համար ձևավորվում են երկրների բարձրագույն հաշվեքննիչ մարմինները, որոնց առաքելությունն է հանրության կողմից իշխանությանը վստահված հանրային հարստության կառավարման վերաբերյալ հանրությանը՝ ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելը: Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) արտաքին պետական վերահսկողություն իրականացնում է Հաշվեքննիչ պալատը (ՀՊ), որը, ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածի համաձայն, անկախ պետական մարմին է, հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ⁴:

Հաշվետվողականության դերն առավել կարևոր է այն ոլորտների համար, որոնք հիմնարար ու ռազմավարական նշանակություն ունեն պետության զարգացման համար, ինչպես նաև հանրային միջոցների ծախսման տեսանկյունից զգալի կշիռ են զբաղեցնում պետական բյուջեի ծախսերի մեջ: Այդպիսի ոլորտներից է հանրակրթությունը, որի համար յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից հատկացվում են զգալի ֆինանսական միջոցներ: Ընդ որում,

¹ UNDP, *Fostering Social Accountability: from Principle to Practice Guide*, 2010, https://www.shareweb.ch/site/DDLGN/Documents/UNDP_Fostering%20Social%20Accountability-Guidance%20Note_2010.pdf (ղիտված՝ 10.06.2023):

² The World Bank, "Sourcebook of 21 Social Accountability Tools", Nepal, 2012, <https://documents.worldbank.org/pt/publication/documents-reports/documentdetail/513571468059674130/sourcebook-of-21-social-accountability-tools> (ղիտված՝ 10.06.2023):

³ ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշումը «ՀՀ արտաքին պետական հաշվեքննության ոլորտի իրավական բարելավումների հայեցակարգը» հաստատելու մասին, https://armsai.am/sites/default/files/%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%20187-%D4%BC_merged.pdf (ղիտված՝ 10.06.2023):

⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 198, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (ղիտված՝ 10.06.2023):

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի⁵ նպատակներից մեկը կառավարման և որոշումների կայացման ներառական, մասնակցային, ինքնավար, թափանցիկ և հաշվետու համակարգի ներդրումն է:

Հանրակրթության ոլորտի հաշվետվողականության ապահովման նպատակով 2018-2019թթ. ժամանակահատվածում ՀԴ-ն «Հանրակրթություն» ծրագրի իրականացման լիազոր մարմնում՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում (ԿԳՄՍՆ) հաշվեթևություն չի իրականացրել, իսկ 2020-2022թթ. ընթացքում իրականացրել է ընդամենը 14 հաշվեթևություն⁶: Այդ հաշվեթևությունների շրջանակներում արձանագրվել են ընդհանուր թվով 129 անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, ներկայացվել՝ 62 առաջարկություններ⁷, որոնց վերաբերյալ, սակայն, հրապարակումներ կամ հանրային քննարկումներ նշված ժամանակահատվածում չեն եղել:

Ընդհանուր առմամբ՝ սահմանափակ է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) անդրադարձը հաշվետվողականության թեմային:

Պետական բյուջեի հաշվետվողականության հարցին իր հրապարակումներում անդրադարձել է Թանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ): Մասնավորապես հիշատակման է արժանի «Բաց բյուջեների հետազոտությունը»⁸, որտեղ կիրառվում են միջազգայնորեն ընդունված չափանիշներ՝ գնահատելու պետական բյուջեի մասին տեղեկատվության հանրային հասանելիությունը, հանրության համար պետական բյուջեի մշակման գործընթացին մասնակցելու՝ օրենքով սահմանված հնարավորությունները և բյուջետային վերահսկողության ինստիտուտների, այն է՝ օրենսդիր և պետական հաշվեթևիչ մարմինների դերը: Տվյալ հետազոտությունը թեև համապարփակ գնահատում է բարձրագույն հաշվեթևիչ մարմնի դերը բյուջետավորման գործընթացում, սակայն հաշվետվողականության ապահովման գործընթացում ՀԴ ունեցած գործառույթների և դրանց իրականացման մակարդակի վերաբերյալ գնահատումներ չի պարունակում:

ԹԻՀԿ «Ազգային Ժողովի վերահսկողական գործառույթի գնահատում» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ Ազգային Ժողովն (ԱԺ) ունի անհրաժեշտ լիազորություններ և գործիքներ իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար, սակայն դրանք բավարար չափով և որակով չի կիրառում, որ հանգեցնի կառավարության աշխատանքի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը: Չեկույցը նաև անդրադառնում է խորհրդարանի կողմից հետհսկողության իրականացմանը՝ մատնանշելով, որ առկա չեն

⁵ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին, Ծրագրի 78-րդ կետի 3-րդ ենթակետ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=175541> (դիտված՝ 15.06.2023):

⁶ Բոլոր հաշվեթևությունների ցանկը և հղումները ներկայացված են հավելվածում:

⁷ ՀՀ հաշվեթևիչ պալատ, «ՀՀ հաշվեթևիչ պալատի կողմից հրապարակված ընթացիկ եզրակացություններ», <https://armsai.am/hy/current-conclusions> (դիտված՝ 15.06.2023):

⁸ Միջազգային բյուջետային գործընկերություն, «Բաց բյուջեների հետազոտություն», Հայաստան, 2021, <https://transparency.am/hy/publication/pdf/283/9819> (դիտված՝ 15.06.2023):

հստակ իրավական լիազորություններ կամ պարտավորություններ՝ գնահատելու և վերահսկելու ընդունված օրենքների կատարման վիճակը⁹:

ԹԻՅԿ կողմից հրապարակված մեկ այլ՝ «Խորհրդարանի կողմից ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ թույլ վերահսկողության պատճառների և հետևանքների վերհանում» հետազոտությունն անդրադառնում է նաև ՀԴ կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության ներկայացմանը՝ նշելով, որ ԱԺ-ում ՀԴ տարեկան հաշվետվությունը քննարկվում է, սակայն որոշում չի ընդունվում, ինչի արդյունքում քննարկման նպատակը դառնում է անհասկանալի¹⁰:

Հանրակրթության ոլորտի հաշվետվողականության վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացվել են նաև Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կողմից, որոնցից, մասնավորապես ուշադրության են արժանի 2014 թվականի իրականացված «Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում»¹¹ և «Երևանի հանրակրթական հիմնական դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկում և գնահատում»¹² զեկույցները, որոնք թեև անդրադառնում են «Հանրակրթություն» ծրագրի բյուջետավորմանը և հաշվետվողականությանը, սակայն արտաքին պետական հաշվեքննության բաղադրիչի դիտարկում չեն իրականացնում: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արտաքին պետական հաշվեքննության համակարգը ՀՀ-ում ներդրվել է 2018 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում, իսկ 2014 թվականին դեռևս գործում էր ՀՀ Վերահսկիչ պալատը՝ իրեն վերապահված վերահսկողական գործառույթներով:

Մեկ այլ օրինակ է Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոնի «Հայաստանում կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում»¹³ վերնագրով հետազոտությունը, որտեղ հեղինակները հանգամանալից անդրադարձել են կրթության ոլորտի ծախսերի արդյունավետության գնահատմանը, սակայն ծախսերի հաշվետվողականության և դրանում արտաքին հաշվեքննության կարևորության վերաբերյալ դիտարկումներ և գնահատումներ չեն իրականացվել:

Թեմային առնչվող այս սակավաթիվ հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կա՛մ անդրադառնում է հանրակրթության ոլորտում առկա կրթական խնդիրներին, կա՛մ պետական բյուջեի հաշվետվողականությանը՝ առանց «Հանրակրթություն» ծրագրի վրա շեշտադրումներ կատարելու, իսկ հաշվետվողականության

⁹ ԹԻՅԿ, «ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի գնահատում», Երևան, 2023, <https://transparency.am/hy/publication/352>:

¹⁰ ԹԻՅԿ, «Խորհրդարանի կողմից ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ թույլ վերահսկողության պատճառների և հետևանքների վերհանում», Երևան, 2022, <https://transparency.am/hy/publication/294>:

¹¹ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Համայնքների ֆինանսիստների միավորում, «Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում», Երևան, 2014 <https://www.osf.am/wp-content/uploads/2013/11/State-Policy-on-General-Education-Financing.pdf> (դիտված՝ 18.06.2023):

¹² Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ, «Երևանի հանրակրթական հիմնական դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկում և գնահատում», Երևան, 2014, <https://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Analysis-of-Financial-Management-of-12-Yerevans-Mainstream-Schools.pdf> (դիտված՝ 19.06.2023):

¹³ Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն, «Հայաստանում կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում», Երևան, 2018, https://policyobserver.am/wp-content/uploads/Book4_Krtutyun.pdf (դիտված՝ 23.06.2023):

գործընթացում արտաքին պետական հաշվեքննությանը վերաբերող խնդիրներին, դրանց լուծման հնարավոր մոտեցումներին կամ քաղաքականությանն առնչվող ուսումնասիրություններն առհասարակ բացակայում են:

Հաշվետվողականության գործընթացում արտաքին հաշվեքննության շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի նաև հաշվեքննության արդյունքների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ արձանագրված անհամապատասխանությունների և ներկայացված առաջարկությունների բնույթը և բովանդակությունը: Շատ դեպքերում դրանք էպիզոդային բնույթ են կրում, որոնք ոչ միայն չեն հանգեցնում քաղաքականության բարելավմանը, այլև ընդամենը լուրջ աշխատանքային կարգավորումներ են նախատեսում: Այսպես, ՀԴ-ի առաջարկությունները ներկայացված են մեկ փաթեթով և տարանջատված չէ, թե առաջարկությունների որ մասն է միտված համակարգին, որը քաղաքականությանը կամ գործընթացներին, ինչն էլ իր հերթին հնարավորություն չի տալիս ուշադրությունը կենտրոնացնել առավել ռազմավարական նշանակության առաջարկությունների հետհսկողության վրա: Մինչդեռ, հաշվեքննության միջազգային ստանդարտների¹⁴ համաձայն, հաշվեքննության գործընթացի բաղկացուցիչ մաս են ինչպե՛ս պլանավորումը, իրականացումը և հաշվետվողականությունը, այնպե՛ս էլ հաշվեքննությունների արդյունքներով ձևավորված առաջարկությունների իրականացման հետհսկողության լիազորությունը, որը «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով ներկայումս սահմանված չէ:

ՀԴ կողմից իրականացվող վերահսկողության ընթացիկ կարգավորմամբ ՀԴ-ն հաստատում է հաշվեքննության արդյունքները և ուղարկում ՀՀ ԱԺ, Կառավարություն և հաշվեքննվող օբյեկտին, ինչպես նաև՝ հրապարակում կայքում: Հաշվեքննվող օբյեկտը հաշվեքննության առաջարկությունների վերաբերյալ արձագանքում է 30 օրվա ընթացքում, որը ՀԴ-ի կողմից փոխանցվում է ԱԺ-ին և Կառավարությանը: Վերջին 3 տարիների ընթացքում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում և ոլորտային այլ հանձնաժողովներում կազմակերպվել են ՀԴ եզրակացությունների հիման վրա քննարկումներ, որոնցից կրթության ոլորտին առնչվել է միայն մեկը, որը տեղի է ունեցել 2023թ. հունիս ամսին և վերաբերել 2022թ. տարեկան հաշվեքննության արդյունքներին: ՀՀ կառավարության կողմից ՀԴ առաջարկությունների հիման վրա գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը բացակայում է ինչպե՛ս ՀՀ կառավարության կողմից տրված հանձնարարականների կատարման, այնպե՛ս էլ ՀՀ պետական վերահսկողական ծառայության (ՊՎԾ) կողմից իրականացված ընթացիկ հսկողական միջոցառումների իրականացման առումով:

Վերոնշյալ արձանագրումներն իրենց մեջ ամփոփում են հաշվետվողականության գործող համակարգի խնդիրների միայն ընդհանրական նկարագիրը, մինչդեռ հանրակրթության ոլորտի հաշվետվողականության բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր բաղադրիչի ամբողջական վերլուծություն և գնահատում, որը թույլ կտա մի կողմից վերհանել հաշվետվողականության համակարգի խնդիրների առաջացման

¹⁴ IFPP, *International Standards of Supreme Audit Institutions*, <https://www.issai.org/professional-pronouncements> (ղիտված՝ 27.06.2023):

պատճառները և դրանց ունեցած հետևանքները, իսկ մյուս կողմից որոնել լուծումներ հետազայում դրանցից խուսափելու և համակարգի զարգացմանը նպաստելու համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով միջազգային փորձում¹⁵ կիրառվող խնդիրների ծառի մոտեցումը, իսկ հետազոտության փուլում օգտագործվել է *Իրավիճակ-Խնդիր-Պատճառ-Հետևանք* տեխնիկան, որը ենթադրում է առկա իրավիճակի ուսումնասիրություն և դրա համադրում օրենսդրությամբ սահմանված կարգավորումների հետ՝ բացահայտելով սահմանված գործելակարգի և փաստացի իրավիճակի միջև տարբերությունները՝ ի՞նչ պետք է լիներ, և ի՞նչ է փաստացի առկա: Նշված համադրությունը թույլ է տվել բացահայտել հանրակրթության ոլորտում պետական հաշվեքննության, ինչպես նաև ծրագրի ընդհանուր հաշվետվողականության գործընթացում առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները: Գնահատվել է առկա խնդիրների ունեցած հետևանքը ծրագրի հաշվետվողականության համակարգի վրա և ներկայացվել են առաջարկություններ, որոնք կնպաստեն արձանագրված խնդիրների կարգավորմանը:

Հետազոտության համար անհրաժեշտ տվյալները հավաքագրվել են [ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ պետական վերահսկողական ծառայության, ԿԳՄՍՆ և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ՊՈԱԿ-ի](#) պաշտոնական կայքերից, [ՀՀ ֆինանսների նախարարության \(\\$Ն\) ինտերակտիվ բյուջեի](#) ցուցանիշների հրապարակումներից:

Հետազոտության ընթացքում մշակվել են հարցաթերթեր, որոնք ուղարկվել են ՀՀ ԱԺ, ԿԳՄՍՆ, ՀՊ, ՊՎԾ և Կրթության տեսչական մարմին (ԿՏՄ): Հարցաթերթերի մշակումն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների համար կիրառվող պրակտիկայի¹⁶ հիման վրա: Դրանց միջոցով հավաքագրված որակական և քանակական տվյալների վերլուծությունը հիմք է հանդիսացել եզրահանգումների համար:

Հետազոտության ընթացքում հավաքագրված տեղեկատվության ոչ լիարժեք հասանելիության կամ չտրամադրման, ինչպես նաև հաշվեքննության ծածկույթի հետ կապված սահմանափակումների հետևանքով կատարված եզրահանգումները վերաբերել են «Հանրակրթություն» ծրագրի ոչ ամբողջական շրջանակին: ԿՏՄ-ից ստացված տեղեկատվությունները հետազոտության մեջ չեն կիրառվել հաշվետվողականության գործընթացին առնչության բացակայության պատճառով:

¹⁵ INTOSAI, Performance Audit Subcommittee – PAS, *The Situation-Complication-Cause-Consequence Technique, Designing Performance Audits – Setting Audit Questions*. Performance Audit Sub-committee, https://afrosai-e.org.za/wp-content/uploads/2019/04/PAS-Guideline-5-Designing-Performance-Audits-20131_00.pdf (նիստված՝ 01.07.2023):

¹⁶ Babbie, E., *The Practice of Social Research*, Cengage AU, 2020, pp. 249-289 (նիստված՝ 01.07.2023):

1. «Հանրակրթություն» ծրագիրն ու հաշվետվողականության կարգավորումները

1.1 Ծրագրի բովանդակությունը և հիմնական ցուցանիշները

Հանրակրթությունն ավանդաբար հանդիսանում է կրթության ոլորտի գերակայությունը: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է¹⁷:

Վերոնշյալ սահմանադրական նպատակն իրագործվում է ԿԳՄՄՆ կողմից՝ «Հանրակրթություն» ծրագրի իրականացման միջոցով: Ծրագրի գլխավոր նպատակն է ապահովել դպրոցահասակ երեխաների պարտադիր կրթության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը՝ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների և ծրագրերի շրջանակում¹⁸: Ծրագրի թիրախը, համաձայն ծրագրի անձնագրի, սովորողների համախառն ընդգրկվածության ցուցանիշի 99% ապահովումն է:

2021 թվականի փետրվարի 4-ին ՀՀ կառավարության N136-Ն որոշմամբ¹⁹ ընդունվեց հանրակրթության նոր չափորոշիչը, իսկ ապրիլ ամսին ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվեցին դրանցից բխող առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Հանրակրթության ոլորտի բարեփոխումների կարևորագույն մաս է կազմում նախատեսված մոդուլային տիպի 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցումը, հիմնանորոգումն ու վերանորոգումը, որը Կառավարության հնգամյա ծրագրի հիմնական թիրախներից է:

«Հանրակրթություն» ծրագիրը ներառում է տարրական, հիմնական և միջնակարգ մակարդակներում ընդհանուր, հատուկ և մասնագիտացված կրթական ծրագրերի ֆինանսավորումը, ինչպես նաև դրանց իրականացմանը նպաստող մի շարք միջոցառումներ: Միաժամանակ, ծրագրում ներառված են քաղաքականության միջոցառումներ՝ միտված սովորողներին մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության ապահովմանը, ինչպես նաև հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու համար հանրակրթական դպրոցների հենքի վրա ստեղծված նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորմանը:

Ինչպես երևում է *Աղյուսակ 1*-ից, հանրակրթության ծրագրի գերակշիռ մասը՝ շուրջ 95%-ը, բաժին է ընկնում տարրական, հիմնական և միջնակարգ մակարդակներում ընդհանուր, հատուկ և մասնագիտացված կրթական ծրագրերի ֆինանսավորմանը: Մնացած մասը, որը 2020-2022 թթ. կազմել է համապատասխանաբար 3,584,652.1 մլն. ՀՀ դրամ, 4,643,108.7 մլն. ՀՀ դրամ և 5,332,953.49 մլն. ՀՀ դրամ, ուղղվել է ծրագրում ներառված քաղաքականության իրականացմանը նպաստող միջոցառումներին:

¹⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (նիստված՝ 01.07.2023):

¹⁸ ՀՀ Կառավարության 2022թ. բյուջետային ուղերձ, Երևան, 2021, https://minfin.am/website/images/website/documents/copy_1_2.Uxerdz_bacatragir.docx (նիստված՝ 03.07.2023):

¹⁹ ՀՀ կառավարության N136-Ն որոշումը «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը» հաստատելու մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> (նիստված՝ 03.07.2023):

Աղյուսակ 1. «Հանրակրթություն» ծրագրի միջոցառումներն ու ծախսերը 2020-2023թթ., հազ. դրամ

		2020	2021	2022
ԸՆԴԱՄԵՆԸ		96,202,774.4	99,421,460.8	103,305,742.5
Միջոցառումներ, այդ թվում	Ընդամենը	92,618,122.2	94,778,352.0	97,972,789.0
	Կշիռը ծրագրի մեջ	96.3	95.3	94.8
Տարրական	ընդհանուր	29,915,803.55	33,740,336.11	33,746,482.30
	մասնագիտացված	216,619.40	254,583.70	215,801.00
	հատուկ	348,395.00	329,640.50	300,687.30
Միջնակարգ	ընդհանուր	19,024,051.70	16,791,005.10	17,072,160.02
	մասնագիտացված	1,465,582.35	1,828,362.10	1,754,759.05
	հատուկ	427,580.70	337,963.60	353,979.80
Հիմնական	ընդհանուր	39,589,507.72	39,391,247.39	42,363,499.08
	մասնագիտացված	1,077,554.80	1,593,022.50	1,650,288.29
	հատուկ	553,027.00	512,191.00	515,132.20
Այլ միջոցառումներ	Ընդամենը	3,584,652.1	4,643,108.7	5,332,953.49
	Կշիռը ծրագրի մեջ	3.7	4.8	5.2

Հանրակրթության ծրագրի բյուջետային անձնագրով ծրագրի արդյունքները գնահատելու համար, բացի ծրագրի հիմնական ֆինանսական ցուցանիշներից (Հավելված 1), սահմանվել են ընդհանուր թվով 64 արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշներ (Հավելված 2), որոնցից տարրական, հիմնական և միջնակարգ մակարդակներում ընդհանուր, հատուկ և մասնագիտացված կրթական ծրագրերին բաժին է ընկնում երկուական ցուցանիշ:

Աղյուսակ 2. Տարրական, միջնակարգ և հիմնական կրթական մակարդակներում պետական բյուջեի արդյունքային ցուցանիշները


Միջոցառման անվանումը		Դասարանների սովորողների թիվը, մարդ			Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը		
		2020	2021	2022	2020	2021	2022
Տարրական	ընդհանուր	153,501	153,618	155,529	8	7	7
	մասնագիտացված	346	354	334	8	8	8
	հատուկ	232	181	181	7	7	7
Միջնակարգ	ընդհանուր	64,964	65,412	69,118	13	7	7
	մասնագիտացված	1,429	1,523	1,601	14	8	8
	հատուկ	223	203	225	13	7	7
Հիմնական	ընդհանուր	171,406	176,144	179,862	13	7	7
	մասնագիտացված	1,520	1,974	1,898	14	8	8
	հատուկ	331	217	213	13	7	7

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, դասարանների սովորողների ընդհանուր թիվը բոլոր միջոցառումների դեպքում վերջին երեք տարիների ընթացքում հիմնականում աճել է, բացառությամբ հիմնական հատուկ հանրակրթության: Ի տարբերություն սովորողների թվի՝ հաշվետվություններում արտացոլված գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը մի շարք դեպքերում նվազում է արձանագրել: Վերջինս, թեև ֆինանսավորման գործընթացի հետ ուղիղ կապ չունի, սակայն, ըստ էության, հանդիսանում է ծրագրի որակական ցուցանիշ, և դրա վերաբերյալ հաշվետվողականության գնահատումը ևս կարևոր է: Միաժամանակ, ֆինանսավորման մակարդակի հետ ուղիղ փոխկապակցված չէ նաև սովորողների ընդհանուր թիվը, քանի որ ֆինանսավորման գործընթացը ենթադրում է սովորողների թվից բացի նաև դասարանների թվի, յուրաքանչյուր դասարանում սովորողների միջին քանակի վերաբերյալ տվյալներ: Այս տվյալները, ըստ էության, հաշվետվողականության գործող համակարգի պարագայում հանրությանը հասանելի չեն կամ ամբողջական չեն, ինչը նաև անհնարին է դարձնում ֆինանսավորման ծավալների և արդյունքային ցուցանիշների փոխկապակցվածության և դրանից բխող հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ դատողություններ անելու հնարավորությունները:

1.2 Ծրագրի բյուջեն և հաշվետվողականության համակարգը

Կրթության ոլորտը ՀՀ պետական բյուջեի հիմնական ծախսային ուղղություններից մեկն է: 2022թ.-ին այս ոլորտի ծախսերը կազմել են պետական բյուջեի ծախսերի շուրջ 9%-ը, ինչը նախորդ տարվա 8.72%-ի համեմատ ավելացել է 0.3%-ով²⁰: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ԿԳՄՍՆ-ին իր կանոնադրական նպատակների իրականացման համար հատկացվել է 202,606.2 մլն. դրամ, որը 15.9%-ով ավել է նախորդ տարվա կրթության ոլորտի ֆինանսավորումից:

Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի և կրթության ոլորտին հատկացվող ֆինանսավորման դինամիկան, մլն. դրամ²¹



²⁰ՀՀ ֆինանսների նախարարություն, «ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ», https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun (դիտված՝ 05.07.2023):

²¹ ՀՀ ֆինանսների նախարարություն, «ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ», https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun (դիտված՝ 05.07.2023):

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի²² 1.2-րդ հոդվածի 12-րդ մասով և ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշմամբ²³ սահմանված բյուջեների կատարման կարգի 12-րդ կետի համաձայն՝ բյուջեի կատարումը կազմակերպվում է երկմակարդակ ֆինանսավորման համակարգի միջոցով: Այստեղ, մի կողմից, ԿԳՄՄՆ-ը հանդես է գալիս որպես բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ (ԲԳԿ) և ֆինանսավորումը բաշխում է այլ կատարող մարմիններին (մարզպետարաններ, երևանի քաղաքապետարան և նախարարություններ), որոնք էլ, իրենց հերթին, ֆինանսավորում են ծրագիրն իրականացնող կազմակերպություններին: Մյուս կողմից, մի շարք կրթական հաստատություններ գտնվում են ԿԳՄՄՆ անմիջական ֆինանսավորման տակ, և հաշվետվությունները ներկայացնում են անմիջապես ԿԳՄՄՆ: Նույն տրամաբանությամբ էլ տեղի է ունենում հաշվետվությունների ներկայացման գործընթացը:

Արդյունքում, պետական բյուջեի հաշվետվողականության տեսանկյունից ԿԳՄՄՆ-ը հանդես է գալիս մի դեպքում որպես կատարող, մյուս դեպքում որպես ծրագրի իրականացման պատասխանատու: Որպես կատարող՝ ԿԳՄՄՆ-ը ներկայացնում է այն կազմակերպությունների հաշվետվությունների ամփոփ տվյալները, որոնք գտնվում են ԿԳՄՄՆ անմիջական ենթակայության տակ: Մյուս դեպքում՝ որպես ծրագրի իրականացման պատասխանատու, ԿԳՄՄՆ-ը հավաքագրում և ամփոփում է ծրագրի իրականացմանը մասնակցող բոլոր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

Հանրակրթության ոլորտի իրականացումն ապահովող կազմակերպությունների շրջանակը ներառում է ՀՀ ԿԳՄՄՆ, մարզպետարանների, երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններ, ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության մասնագիտացված հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները: Հանրակրթության ոլորտի իրականացումն ապահովող կազմակերպությունների շրջանակն առավել լավ պատկերացնելու համար հարկ է նշել, որ 2022թ. տվյալներով դրանց թիվը 1,402-ն էր, որտեղ սովորում էր 403.7 հազար աշակերտ²⁴:

ՀՀ ԿԳՄՄՆ, երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների ենթակայության նախադպրոցական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների, առանձին մասնագիտացված կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է սուբսիդավորման և/կամ դրամաշնորհի տրամադրման միջոցով, իսկ որոշ դեպքերում էլ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպությունների միջոցով²⁵:


²² «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, օրենքի 1.2-րդ հոդվածի 12-րդ մաս, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75497> (ղիտված՝ 05.07.2023):

²³ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N706-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123376> (ղիտված՝ 05.07.2023):

²⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե, «ՀՀ վիճակագրական տարեգիրք 2023», <https://www.armstat.am/am/?nid=586> (ղիտված՝ 05.07.2023):


²⁵ ՀՀ կառավարության 2022թ. բյուջետային ուղերձ, Երևան, 2021, https://minfin.am/website/images/website/documents/copy_1_2.Uxerdz_bacatragir.docx (ղիտված՝ 06.07.2023):

Գծապատկեր 2. «Հանրակրթություն» ծրագրի ֆինանսավորման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմը




Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, հանրակրթության ոլորտում պետական բյուջեի միջոցների հաշվին գործունեություն իրականացնող կազմակերպությունները հաշվետվությունները (այդ թվում՝ արդյունքային ցուցանիշների վերաբերյալ) ներկայացնում են «Հանրակրթություն» ծրագրի իրականացման պատասխանատուին՝ ԿԳՄՄՆ, որն էլ իր հերթին այդ հաշվետվությունների համախմբման միջոցով ձևավորում է ծրագրի ամփոփ հաշվետվությունը և այն ներկայացնում ՀՀ ՖՆ:

Գծապատկեր 3. ԿԳՄՄՆ ընդհանուր բյուջեն՝ որպես պատասխանատու և կատարող, մլն. դրամ²⁶



Գծապատկեր 4. Հանրակրթական ծրագրի տարեկան բյուջեն՝ որպես պատասխանատու և կատարող, մլն. դրամ



²⁶ ՀՀ ֆինանսների նախարարություն, «ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ», https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetutyun (դիտված՝ 06.07.2023):

Ինչպես երևում է *Գծապատկեր 3-ից* և *Գծապատկեր 4-ից*, որպես իր լիազորության տակ գտնվող ծրագրերի իրականացման պատասխանատու՝ ԿԳՄՍՆ, ծախսերը 2022թ.-ին կազմել են 202,606.2 մլն. դրամ, որից սակայն միայն 77,768.6 մլն. դրամի կամ 38.3%-ի դեպքում է ԿԳՄՍՆ-ը հանդես եկել որպես ծախսերի կատարող: Նույն համամասնությունն է առկա նաև 2020 և 2021 թվականների համար: Ինչ վերաբերում է «Հանրակրթություն» ծրագրին, ապա որպես ծրագրի իրականացման լիազոր մարմին և պատասխանատու, ԿԳՄՍՆ 2022թ. ֆինանսավորման չափը կազմել է 103,305.7 մլն. դրամ, որը կազմում է կրթության ոլորտի ծախսերի 51%-ը, իսկ որպես կատարող՝ ծախսերը կազմել են 17,581.0 մլն. դրամ կամ «Հանրակրթություն» ծրագրի ընդհանուր ծախսերի ընդամենը 17.02%-ը:

Ստացվում է, որ որպես «Հանրակրթություն» ծրագրի լիազոր մարմին և ծրագրի իրականացման պատասխանատու գերատեսչություն՝ ԿԳՄՍՆ-ը հաշվետու է ծրագրի ամբողջ ծավալի համար, սակայն ԿԳՄՍՆ հաշվետվողականության գնահատումը չի իրականացվում նախարարության պատասխանատվության ծածկույթի ողջ շրջանակներում և սահմանափակվում է միայն ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող կազմակերպությունների հաշվետվողականությամբ:

Նշված գործընթացի իրականացման մեխանիզմը նկարագրված է ԿԳՄՍՆ կողմից 28.08.2023թ. ԹԻՅԿ-ին տրամադրած պաշտոնական գրությամբ ներկայացված տեղեկատվության մեջ: Համաձայն գրության՝ պետական բյուջեով ԿԳՄՍՆ համակարգմամբ իրականացվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների շրջանակներում ԿԳՄՍՆ կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման մասով նախարարությունն իրականացնում է հաշվետվությունների ընդունում, ուսումնասիրում և ամփոփում, անհրաժեշտության դեպքում, պատրաստում է համապատասխան մարմիններին գրություններ կազմակերպության հաշվետվություններով ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու համար: ԿԳՄՍՆ-ը հանրակրթության ոլորտում իր ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների և այլ կազմակերպությունների կողմից ընդունում և ՀՀ ՖՆ է ներկայացնում պետական բյուջեի եռամսյակային հաշվետվությունները, որոնց հավաստիությունը ստուգվում է նախարարության գանձապետական համակարգի ծրագրերի միջոցով²⁷: Հավաստիությունը ստուգելու շրջանակում ԿԳՄՍՆ-ը, հավանաբար, նկատի ունի բյուջետային ցուցանիշների համապատասխանության գնահատումը, քանի որ հավաստիության ստուգումն իրականում ենթադրում է սկզբնական փաստաթղթերի և ելակետային տվյալների ճշմարտացիության ստուգում, որը գանձապետական գործառնությունների ծրագրի միջոցով ստուգել հնարավոր չէ:

Համաձայն ԿԳՄՍՆ կանոնադրության²⁸ 11-րդ կետի 9-րդ ենթակետի՝ նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է իր ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերի և բաժնեմասերի կառավարումը, իր ենթակայության կազմակերպություններում կատարում է ֆինանսատնտեսական ու արտադրական գործունեության փաստաթղթային

²⁷ Համակարգի ծրագրերը՝ <https://clienttreasury.minfin.am> և LS FinancPB_A ունեն սահմանափակ հասանելիություն:

²⁸ Հայաստանի Հանրապետության վարչապետի 1 հունիսի 2019 թվականի N 661-Լ որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=131100> (դիտված՝ 06.07.2023):

ուսումնասիրություններ և վերստուգումներ (աուդիտ), իրականացնում վերահսկողություն բյուջետային միջոցների ծախսման և պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ օգտագործման նկատմամբ:

Համաձայն ԿԳՄՍՆ կողմից տրամադրված տեղեկատվության՝ Նույն Նախարարության կողմից ենթակա կազմակերպություններում ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է տարեկան ծրագրերի վրա հիմնված աուդիտորական առաջադրանքների կատարմամբ, որի արդյունքում կազմվում են աուդիտորական վերջնական հաշվետվություններ, որոնցում արձանագրվում են հայտնաբերված խնդիրներն ու ռիսկերը (եթե այդպիսիք առկա են): Իրավական փաստաթղթերի հիմքը հանդիսանում է Ներքին աուդիտի ոլորտը կարգավորող «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը²⁹ և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը (ներքին աուդիտին առնչվող Նախարարի հրամաններ, ներքին աուդիտի կոմիտեի որոշումներ):

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի³⁰ 10-րդ հոդվածի՝ ռազմավարական և տարեկան ծրագրերի և դրանց փոփոխությունների Նախագծերը քննարկվում են կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի անդամների հետ:

Ներքին աուդիտի շրջանակի և կազմակերպությունների ցանկը սահմանվում է Նախարարի կողմից աուդիտի կոմիտեի ներկայացված առաջարկության հիման վրա, որի շրջանակներում 2020-2022թ. ընթացքում ԿԳՄՍՆ ներքին աուդիտն իրականացվել է Նախարարության ենթակայությամբ գործող առանձին կազմակերպություններում կամ ստորաբաժանումներում: Համապատասխանաբար, ներքին աուդիտի հաշվետվությունները ներկայացվել են ըստ այդ միավորների (կառուցվածքային ստորաբաժանում կամ ենթակա կազմակերպություն): Այսպիսի մոտեցումը թեև կարող է զգալիորեն նպաստել առանձին միավորների ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը, սակայն հաշվետվողականության վրա մեծ ազդեցություն ունենալ չի կարող, քանի որ համապատասխան աուդիտորական հաշվետվությունը վերաբերում է բյուջեի կատարման առանձին միավորներին, այլ ոչ թե ընդհանուր բյուջետային ծրագրին: Մինչդեռ, եթե ներքին աուդիտը իրականացվեր ոչ թե ըստ առանձին կազմակերպությունների, այլ ըստ բյուջետային ծրագրերի կամ միջոցառումների, այն հնարավորություն կտար Նախ աուդիտի ենթակա կազմակերպությունների ընտրությունը կատարել ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա, և այնուհետ հաշվետվությունը ներկայացնել ոչ թե առանձին կազմակերպությունների, այլ ընդհանուր ծրագրի համար, ինչն իր հերթին կնպաստեր ընդհանուր ծրագրի հաշվետվողականության բարելավմանը:

²⁹ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65056> (ղիտված՝ 10.07.2023):

³⁰ Նույն տեղում, հոդված 10, մաս 3:

2. Հաշվեքննության գործընթացի օրենսդրական կարգավորումները և խնդիրները

2.1 Հաշվեքննության կարգավորումներն ու մեխանիզմները

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տարի՝ Նախորդ գործունեության ծրագրի ավարտման ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ, ՀՊ-ն հաստատում է գործունեության ծրագիրը մեկ տարվա համար: Գործունեության ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

1. պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն,
2. հաշվեքննություն՝ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ և ըստ հաշվեքննության առարկայի, հաշվեքննվող օբյեկտի, հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման,
3. ՀՊ ներքին գործընթացների ծրագիր՝ ՀՊ-ում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման, որակի կառավարման համակարգին, անձնակազմի կառավարմանն ու վերապատրաստմանը, միջազգային համագործակցությանը և սույն օրենքով ՀՊ-ին վերապահված այլ հարցեր:

ՀՊ-ն իրավասու է գործունեության ծրագրի 2-րդ մասում իրականացնելու հիմնավորված փոփոխություն և/կամ լրացում՝ գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ: ՀՊ գործունեության ծրագրի 1-ին և 2-րդ մասերով Նախատեսված ծրագրային կետի կատարումը տվյալ տարում չավարտվելու դեպքում տեղափոխվում է հաջորդ տարի³¹:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը սահմանում է ծրագրային կետերով Նախատեսված հաշվեքննությունների իրականացման կարգը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու հիմնարկներում իրականացվող հաշվեքննության արդյունքում կազմվում է եզրակացություն կամ ընթացիկ եզրակացություն³²:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ ՀՊ-ն պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները համապատասխանաբար այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ 4 ամսվա ընթացքում, ներկայացնում է ԱԺ³³, իսկ գործունեության ծրագրի 2-րդ մասում ընդգրկված ծրագրային կետի հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը հաստատվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Վերջինս ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ՀՊ-ին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված

³¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119273> (ղիտված՝ 10.07.2023)


³² Նույն տեղում, 34-րդ հոդված:

³³ Նույն տեղում, 27-րդ հոդված, մաս 4:

անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն³⁴:

Նշված տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը և ներկայացնում ԱԺ և ՀՀ կառավարություն³⁵: Սահմանված տեղեկատվության չտրամադրման դեպքում ՀԴ-ն նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, դրա վերաբերյալ տեղեկատվությունը կցում է ընթացիկ եզրակացությանը և ուղարկում է ԱԺ և ՀՀ կառավարություն³⁶:

Գծապատկեր 5. Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի 1-ին մասի համաձայն իրականացվող հաշվեքննությունների և դրանից բխող գործընթացների ժամանակագրությունը



Գծապատկեր 5-ում ներկայացված է ՀԴ կողմից պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների և տարեկան կատարման վերաբերյալ հաշվեքննությունների իրականացման ժամանակացույցը, որտեղ գունային բաժանման միջոցով տարբերակված է յուրաքանչյուր եռամսյակի հաշվեքննությանն առնչվող գործընթացները:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետհսկողությանն առնչվող որևէ գործելակարգեր նախատեսված չեն, սակայն տրամաբանական է, որ հետհսկողական գործընթացը պետք է տեղի ունենա հաշվեքննության բոլոր գործընթացների ավարտից հետո:

³⁴ Նույն տեղում, մաս 6:
³⁵ Նույն տեղում, մաս 7:
³⁶ Նույն տեղում, մաս 8:

2.2 Հաշվեքննության ծածկույթը և շրջանակը

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՊ-ն հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում: Նույն օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերջինները հանդես են գալիս որպես հաշվեքննության օբյեկտներ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվեքննության առարկան հաշվեքննության օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեությունն է:

Համաձայն պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի 9-րդ կետի³⁷՝ պետական բյուջեի կատարման հաշվեքննության օբյեկտները ՀՀ պետական այն մարմիններն են, որոնք հանդիսանում են բյուջետային ծրագրերի կատարողներ և եկամուտների հավաքագրման համար պատասխանատու մարմիններ: Ընդ որում՝ նշված է, որ նպատակահարմար չէ որպես հաշվեքննության օբյեկտ սահմանել բյուջետային ծրագրի պատասխանատու գերատեսչությանը, քանի որ սկզբնական հաշվառման փաստաթղթերը գտնվում են բյուջետային ծրագրի կատարողների մոտ³⁸:

Հակառակ ՀՊ կողմից «նպատակահարմար չլինելու» մոտեցմանը՝ ԹԻՎԿ-ի հարցմանն ի պատասխան ԿԳՄՍՆ կողմից 28.08.2023թ. գրությամբ ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ պետական բյուջեով ԿԳՄՍՆ համակարգմամբ իրականացվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների շրջանակներում նախարարության կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման մասով ԿԳՄՍՆ-ն իրականացնում է հաշվետվությունների ընդունում, ուսումնասիրում և ամփոփում, անհրաժեշտության դեպքում, պատրաստում է համապատասխան մարմիններին գրություններ կազմակերպության հաշվետվություններով ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու համար: ԿԳՄՍՆ-ը հանրակրթության ոլորտում իր ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների և այլ կազմակերպությունների կողմից ընդունում և ՀՀ ՖՆ է ներկայացնում պետական բյուջեի եռամսյակային հաշվետվությունները, որոնց հավաստիությունը ստուգվում է ՖՆ գանձապետական համակարգի միջոցով: Ավելին, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշմամբ սահմանված բյուջեների կատարման կարգի 9-րդ կետի 2) ենթակետի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 1.2-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված ԲԳԿ-ները պատասխանատու են իրենց և ենթակա հիմնարկների ֆինանսական, տնտեսական գործունեության, հաշվապահական հաշվառման վարման համար:

Համաձայն ՀՊ պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացությունների՝ ՀՊ կողմից ՀՀ ԿԳՄՍՆ-ը «Հանրակրթություն» ծրագրի հաշվեքննությունների համար սահմանվել է որպես բյուջետային ծրագրերի կատարող, այլ ոչ որպես պատասխանատու մարմին, այսինքն՝ հաշվեքննության է ենթարկվել ԿԳՄՍՆ բյուջեի 77,768.6 մլն. դրամը, որի մեջ ներառված է հանրակրթության ծրագրի 17,581.0 մլն. դրամ ծախսերը: Այս մոտեցման հետևանքով ՀՊ կողմից 2020-2022թթ. ընթացքում հաշվեքննության ծածկույթի մեջ ներառվել են

³⁷ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 105-Լ որոշման հավելված, <http://armsai.am/files/decrees/2022/105l.zip> (դիտված՝ 15.07.2023):

³⁸ Նույն տեղում:

հանրակրթության ոլորտի միայն այն ծախսերը, որոնց մասով ԿԳՄՄՆ-ը հանդես է գալիս որպես կատարող: Սա նշանակում է, որ փաստացի հաշվեթևության է ենթարկվել հանրակրթության ծրագրով պետական բյուջեի ծախսերի միայն 17.02%-ը, հետևաբար կատարված եզրահանգումները և ներկայացված առաջարկությունները ևս վերաբերել են միայն հանրակրթության բյուջեի մոտ 1/5-րդ մասին:

Ավելին, ինչպես արդեն նշվել է, բյուջետային ծախսերի իրականացման պատասխանատուի շրջանակն իր մեջ ներառում է նաև ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից հանրակրթություն ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը, ինչը ենթադրում է թվով 11 կատարող գերատեսչություններ՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով և ռիսկերով, որոնք հաճախ վերաբերելի չեն ԿԳՄՄՆ-ին: Միևնույն ժամանակ, հենց մարզպետարաններն են պատասխանատու՝ իրականացնելու դպրոցների բյուջեների վերաբաշխումը, ինչն իր հերթին առաջացնում է բազմաթիվ ռիսկեր: Այդ իսկ պատճառով ծրագրի հաշվետվողականության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվեթևությունների ծածկույթի մեջ ներառել ծախսերի կատարողների ամբողջական շրջանակը, որպեսզի հաշվեթևության ստացած արդյունքները լինեն ամբողջական և վերաբերելի ամբողջ ծրագրին:

ՀՀ ՀՊ 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 102-Լ որոշմամբ հաստատված ֆինանսական հաշվեթևության մեթոդաբանության³⁹ 5-րդ բաժնի համաձայն՝ ֆինանսական հաշվեթևության իրականացման ժամանակ կիրառվում է Եականության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ հաշվեթևության մեջ ներառվում են միայն Եականության շեմից (հաշվարկվում է սահմանված մեթոդաբանությամբ՝ յուրաքանչյուր հաշվեթևության ժամանակ) բարձր ծախսային միավորները: Սրանից հետևում է, որ հաշվեթևության իրականացման համար ԿԳՄՄՆ-ի՝ որպես պատասխանատուի կատարած ծախսերը հիմք ընդունելու պարագայում կփոփոխվեն նաև Եականության վերաբերյալ հաշվարկները և գնահատականները, ինչը հնարավորություն կտա եզրահանգում կատարել ամբողջական ծրագրի, այլ ոչ թե դրա ընդամենը 1/5-րդ մասի վերաբերյալ:

2.3 ԿԳՄՄՆ-ում իրականացված հաշվեթևությունները և ներկայացված առաջարկությունները

2018-2019 թվականներն ընդգրկող ժամանակահատվածում ՀՊ-ն ԿԳՄՄՆ մասով հաշվեթևություններ չի իրականացրել, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ «Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 43-հոդվածի 6-րդ մասի՝ պետական բյուջեի երեք, վեց ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեթևության իրականացման մասին դրույթն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից: 2020-2022 թվականների ընթացքում իրականացված 14 հաշվեթևություններից 12-ը եղել են պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման վերաբերյալ ֆինանսական և համապատասխանության հաշվեթևություն, որոնք ներառված են եղել ՀՊ համապատասխան տարիների գործունեության ծրագրերի առաջին մասում, իսկ 2 հաշվեթևություններ իրականացվել են

³⁹ ՀՀ հաշվեթևիչ պալատի «2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 102-Լ որոշմամբ հաստատված ֆինանսական հաշվեթևության մեթոդաբանություն», <http://armsai.am/files/decrees/2022/102i.zip> (դիտված՝ 15.07.2023):

գործունեության երկրորդ մասում, այսինքն՝ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա:

Աղյուսակ 3. ԿԳՄՄՆ պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությունների հիմնական արդյունքները⁴⁰

Տարեթիվ	2020	2021	2022
Անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ	27	23	9
Որից հանրակրթությանը վերաբերող	11	5	2
Առաջարկություններ	8	9	3
Որից հանրակրթությանը վերաբերող	2	2	2
Հաշվեքննության ծածկույթ	70,261,147.08	74,143,527.82	77,768,554.7
Որից հանրակրթությանը վերաբերող	15,282,116.18	17,326,806.97	17,581.472.0

Ինչպես երևում է ներկայացված Աղյուսակ 3-ում, վերջին 3 տարիների ընթացքում ՀԴ կողմից տարեկան հաշվեքննությունների շրջանակներում արձանագրվել են ընդհանուր թվով 59 անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որոնցից հանրակրթության ոլորտին վերաբերել են 18-ը: Իրականացված հաշվեքննության արդյունքներով ներկայացվել է 20 առաջարկություն, որից միայն 6-ն են վերաբերել հանրակրթության ոլորտին: Եթե ներառենք պետական բյուջեի կատարման վերաբերյալ երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվեքննությունները, ապա արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների, ինչպես նաև ներկայացված առաջարկությունների թիվն ավելի շատ կլինի: Մասնավորապես.

- 2020 թվականին ԿԳՄՄՆ-ում **իրականացված բոլոր (երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման) հաշվեքննությունների** շրջանակներում ներկայացվել է ընդհանուր թվով 26 առաջարկություն: Ինչ վերաբերում է տարվա ընթացքում արձանագրված անհամապատասխանություններին և խեղաթյուրումներին, ապա համաձայն ԿԳՄՄՆ-ի տրամադրած տեղեկատվության՝ 2020 թվականի հաշվեքննությունների ընթացքում արձանագրված է թվով 51 անհամապատասխանություն և այլ փաստեր, որոնցից ընդունվել է ի գիտություն 9-ը, բացատրություն է տրվել 1-ին, ընդունվել է 1-ը և առարկություն է ներկայացվել 40-ի վերաբերյալ:
- 2021 թվականին ԿԳՄՄՆ-ում **իրականացված բոլոր հաշվեքննությունների** արդյունքներով ներկայացված 23 առաջարկություններից միայն 5-ն են վերաբերել հանրակրթության ոլորտին, որից 3-ը վերաբերել են տեղեկատվության տրամադրմանը կամ հաշվետվությունների կազմմանը, իսկ 2-ը՝ ֆինանսավորման գործընթացում միջին թվի հաշվարկման բանաձևին, որի վերաբերյալ նախարարությունը ներկայացրել է պարզաբանումներ և բացատրություններ: Ընթացիկ եզրակացություններում արձանագրվել են 21 անհամապատասխանություն և խեղաթյուրումներ, որոնցից առարկություններ է ներկայացվել 7-ի, բացատրություններ և պարզաբանումներ՝ 14-ի վերաբերյալ:

⁴⁰ Տեղեկատվություն՝ ըստ առանձին հաշվեքննությունների ներկայացված է հավելվածներում:

- 2022 թվականին ԿԳՄՍՆ-ում **իրականացված բոլոր հաշվեքննությունների** շրջանակներում ներկայացվել է ընդհանուր թվով 13 առաջարկություն, որոնցից միայն 2-ն են վերաբերել հանրակրթության ոլորտին: Դրանից առաջինը վերաբերել է իրավական երկու ակտերի միջև առկա անհամապատասխանությանը, որը, ԿԳՄՍՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն, շտկվել է: Մյուս դեպքում ՀԴ կողմից առաջարկվել է միջոցներ ձեռնարկել կրթության ոլորտի ծախսերի հաշվարկային նորմատիվները, ինչպես նաև հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների ֆինանսավորման կարգը համապատասխան իրավական ակտերով սահմանելու ուղղությամբ: Ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ը հայտնել է, որ նախարարության համակարգման ոլորտին առնչվող իրավակարգավորումներին և նորմատիվային դաշտին առնչվող իրավական ակտերի լավարկումն ու թարմացումը մշտապես գտնվում է իր ուշադրության կենտրոնում, ինչի մասին վկայում է վերջին տարիներին նախարարության կողմից մշակված և ընդունված իրավական ակտերի թվի զգալի աճը (նախորդ տարիների նկատմամբ՝ անգամներ): Այսինքն, ՀԴ ներկայացվող անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվության մեջ առաջարկության վերաբերյալ կոնկրետ գործողություններ նախատեսելու, պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու և ժամանակացույց մշակելու փոխարեն նախարարությունը ներկայացրել է ընդհանուր տեղեկատվություն գործընթացի ամփոփ նկարագրի և զարգացումների վերաբերյալ:

2022թ. հաշվեքննությունների արդյունքներով արձանագրվել են ընդհանուր թվով 54 անհամապատասխանություն և խեղաթյուրում, որոնցից 19-ը ԿԳՄՍՆ-ի կողմից ընդունվել են ի գիտություն, 30-ի վերաբերյալ նախարարությունը ներկայացրել է առարկություն և 5-ի վերաբերյալ՝ պարզաբանում: Հատկանշական է նաև այն, որ 2022թ. վերջին երկու հաշվեքննություններում ՀԴ գրեթե բոլոր անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ԿԳՄՍՆ կողմից ներկայացվել են առարկություններ՝ հակառակ այն փաստի, որ նույն արձանագրումների շտկման վերաբերյալ ՀԴ կողմից ներկայացված առաջարկությունները ԿԳՄՍՆ կողմից ընդունվել են: Ընդ որում, համաձայն գործող օրենսդրության,⁴¹ հաշվեքննության իրականացման տվյալ փուլում ԿԳՄՍՆ-ը պետք է ներկայացնի ոչ թե առարկություններ, այլ գործողությունների ծրագիր:

Անհրաժեշտ է նշել, որ առանձնակի ուշադրության է արժանի ներկայացվող առաջարկությունների բնույթը և բովանդակությունը: Շատ դեպքերում դրանք էպիզոդային բնույթ են կրում, որոնք ոչ միայն չեն հանգեցնում քաղաքականության բարելավմանը, այլ ընդամենը տեղային աշխատանքային կարգավորումներ են նախատեսում:

Համաձայն ՀԴ կողմից ներկայացված պարզաբանման՝ պետական բյուջեի կատարման հաշվեքննությունն իր բնույթով հավաստող առաջադրանք է (attestation engagement), որի նպատակն է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների միջոցով ձևավորել պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ կարծիք: Հաշվեքննության այս տեսակի դեպքում, ՀԴ գործող մեթոդաբանությամբ, «ՀԴ ընթացիկ եզրակացության

⁴¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 6:

Նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույց⁴²»-ի մաս 1-ի 6-րդ կետի X-րդ ենթակետով, սահմանված է, որ առաջարկությունները պետք է խմբավորվեն՝ ըստ առաջարկության հասցեատերերի: Մինչդեռ, կատարողականի հաշվեքննության դեպքում հաշվեքննողն ընտրում է «արդյունքին, խնդրին կամ համակարգին միտված հաշվեքննության մոտեցում կամ դրանցից երկուսի կամ բոլորի համակցությունը»⁴³, ստանալով հնարավորություն դասակարգելու առաջարկություններն ընտրված մոտեցմանը համապատասխան:

Արդյունքում, ՀՊ կողմից ԿԳՄՆ ներկայացված բոլոր առաջարկությունները մեկ փաթեթով են, և տարանջատված չէ, թե առաջարկությունների որ մասն է միտված համակարգին, որը՝ տարվող քաղաքականությանը և որոնք՝ գործընթացին, ինչն, իր հերթին, հնարավորություն չի տալիս ուշադրությունը կենտրոնացնել առավել ռազմավարական առաջարկությունների հետհսկողության վրա:

Պետք է նշել, որ 2020-2022 թվականների ընթացքում ԿԳՄՆ-ում իրականացված թվով 12 հաշվեքննություններից (Հավելված 3) ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել է միայն մեկը, որը տեղի է ունեցել 2023թ. հունիսի 23-ին և վերաբերել է ԿԳՄՆ բյուջեի 2022 թվականի տարեկան կատարման վերաբերյալ հաշվեքննության արդյունքներին, իսկ Նախորդ հաշվեքննությունների վերաբերյալ որևէ քննարկում չի կազմակերպվել:

2.4 Հաշվեքննության հետհսկողական գործընթացը

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում ՀՊ տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, ՀՊ գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ ԱԺ և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:


Ինչպե՞ս հանրակրթության ոլորտին վերաբերող հաշվեքննությունների, այնպե՞ս էլ մնացած բոլոր հաշվեքննությունների առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությունը ՀՊ կայքում հրապարակված չէ: Նման կարգավորումներ չեն Նախատեսված չեն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով, որի հետևանքով հանրությունը զրկված է հաշվեքննության վերաբերյալ համապատասխան

⁴² ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույց <http://armsai.am/hy/manuals-standards> (ղիտված՝ 05.08.2023):

⁴³ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հունիսի 30-ի թիվ 146-Լ որոշմամբ հաստատված «Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանություն», http://armsai.am/files/method/pa_methodology.zip 35-րդ կետ, գ) ենթակետ (ղիտված՝ 05.08.2023):

տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: Մյուս կողմից սահմանափակված է նաև հասարակության կողմից հանրային վերահսկողական գործառույթի իրականացման հնարավորությունը, քանի որ տեղեկատվության սահմանափակումներն անհնարին են դարձնում այդպիսի գործողությունների իրականացումը:

Գծապատկեր 6. Հաշվեթևության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության փոխանցման շղթան և ժամանակացույցը⁴⁴



Համաձայն ՀՊ կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2020-2022թթ. ընթացքում ԿԳՄՍՆ-ում իրականացված 12 հաշվեթևություններից մեկի դեպքում նախարարության կողմից օրենքով սահմանված տեղեկատվությունն ընդհանրապես չի տրամադրվել (2020 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեթևություն), իսկ երկու դեպքում տրամադրվել է ժամկետի ուշացմամբ (Հավելված 4):

ՀՊ կայքում առկա չէ հրապարակված տեղեկատվություն ԿԳՄՍՆ ներկայացված առաջարկությունների ընդունման և դրանց իրականացման ընթացքի վերաբերյալ: Մասնավորապես, չկա որևէ հրապարակում այն մասին, թե յուրաքանչյուր հաշվեթևության օբյեկտի մասով ներկայացված առաջարկություններից քանիսն են ընդունվել գերատեսչության կողմից, ընդունված առաջարկություններից քանիսն են արդեն իսկ իրագործվել և քանիսն են դեռևս գտնվում ընթացքի մեջ:

⁴⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմնվելով գործող իրավակարգավորումների և հետազոտության արդյունքների վրա:

ՀԴ կողմից թեև ԿԳՄՍՆ ներկայացվել է 2020-2022 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում իրականացված պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեթևությունների արդյունքում տրված առաջարկությունների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, սակայն ներկայացված տեղեկատվության մեջ բացակայում է վիճակագրությունը, թե այդ առաջարկությունների ո՞ր մասն է հաշվեթևության օբյեկտի կողմից համարվել ընդունելի, քանի՞սն են իրագործվել և ո՞ր մասն է դեռևս ընթացքի մեջ: Սա փաստացի հիմք է տալիս եզրակացնելու, որ նման վիճակագրություն ՀԴ կողմից չի վարվում:

ՀԴ կողմից ԹԻՅԿ-ին տրամադրվել են նաև հաշվեթևությունների համար հիմք հանդիսացած ՀԴ որոշումների համարները և ամսաթվերը, հաշվեթևության իրականացման և ներառող ժամանակաշրջանները և ներկայացված առաջարկությունների քանակը, սակայն առաջարկությունների իրագործման վերաբերյալ տեղեկատվություն ՀԴ կողմից չի տրամադրվել: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ նման վիճակագրություն, ըստ էության, առկա չէ: Ի դեպ, նույն հարցադրումը ԹԻՅԿ կողմից ներկայացվել էր նաև ԿԳՄՍՆ և Կառավարությանը: Հարցմանն ի պատասխան ԿԳՄՍՆ-ը տրամադրել է անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը, իսկ Կառավարության կողմից տեղեկատվություն չի ներկայացվել:

«Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքում ՀԴ-ի հաշվեթևության արդյունքների հետևակողական գործընթացի վերաբերյալ որևէ կարգավորում առկա չէ, իսկ ենթաօրենսդրական մակարդակում միակ կարգավորումն առնչվում է ՀԴ ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցի 1-ին մասի 9-րդ կետին, որով սահմանվում է հետևակողական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նպատակով հաշվեթևության օբյեկտից հարցում իրականացնելու համար կիրառվող ձևաչափը: ՀԴ-ի կողմից ԹԻՅԿ-ին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «*Թեև գործող օրենքով հետևակողական (follow-up) գործառույթ ՀԴ-ն չունի, այդուհանդերձ, ՀՀ ԿԳՄՍՆ-ում, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության պետական կոմիտեում 2020-2022թթ. ընդգրկող ժամանակաշրջանում իրականացված պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեթևություններից մի քանիսում փորձ է կատարվել ներառելու «Հետևակողական գործընթաց» բաժինը*»⁴⁵:

⁴⁵ ՀՀ հաշվեթևիչ պալատի կողմից ԹԻՅԿ-ին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Հաշվեթևությունների մեթոդաբանության կիրառման համապատասխանեցումը բարձրագույն հաշվեթևիչ մարմինների միջազգային ստանդարտներին (ISSAI) կրում է շարունակական բնույթ: Հաշվեթևությունների արդյունքների հետևակողական նպատակով ՀՀ ՀԴ-ն սահմանել է պահանջներ, որոնք հաջորդիվ իրավական բարելավումների լույսի ներքո հնարավոր կլինի ամբողջությամբ ներդնել: Մասնավորապես, համաձայն «Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին ենթակետի արտաքին պետական հաշվեթևությունը՝ հաշվեթևության առարկան կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատումն է: Գնահատումն իրականացվում է հաշվեթևության առարկայի իրականացման համար իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո»:

Հրապարակված ընթացիկ եզրակացությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020-2021 թվականներին ԿԳՄՍՆ վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում առկա է նշված ձևաչափին համապատասխան բաժինը⁴⁶, իսկ 2022 թ.-ին այդ բաժինն առկա չէ:

ՀՊ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «հաշվեթևության փաստաթղթավորումը՝ բացառությամբ օրենքով սահմանված հրապարակման ենթակա ՀՊ որոշումների (այդ թվում՝ հաշվեթևության առաջադրանքներ, պլաններ) հաշվեթևության շրջանակներում տարբեր աղբյուրներից (ներքին աուդիտ, ՊՎԾ և այլն) հավաքագրված ապացույցները, որպես փաստաթղթավորման մաս, հրապարակման ենթակա չեն»: Նշված փաստաթղթերի ոչ հրապարակային լինելը, ինչպես նաև ՀՊ կողմից վերոնշյալ պատճառաբանությամբ չտրամադրել, ըստ էության, սահմանափակել է հետհսկողական գործընթացի փաստաթղթավորման գործող մեխանիզմի և ներքին կարգավորումների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը: ՀՊ 14.09.2022թ. թիվ 187-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արտաքին պետական հաշվեթևության ոլորտի իրավական բարելավումների հայեցակարգ»-ի 3.2.7. կետում ամրագրված է, որ «անհրաժեշտ է վերանայել արտաքին պետական հաշվեթևության սահմանում՝ ավելացնելով հետհսկողությունը (follow-up), որպես հաշվեթևության բաղկացուցիչ գործընթաց»:

Համաձայն կատարողականի հաշվեթևության միջազգային ստանդարտի 136-րդ կետի⁴⁷ աուդիտորը, անհրաժեշտության դեպքում, հետևում է նախորդ աուդիտի արդյունքներին և առաջարկությունների իրականացմանը, միաժամանակ՝ արտաքին հաշվեթևություն իրականացնող լիազոր մարմինը հնարավորության դեպքում զեկուցում է օրենսդիր մարմին: «Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքով աուդիտի արդյունքներին հետևելու, այսինքն՝ հետհսկողություն իրականացնելու, ինչպես նաև դրա վերաբերյալ օրենսդիր մարմին տեղեկացնելու մասով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ: Այնուամենայնիվ, «Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, ՀՊ-ն կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդելով «Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI)» ստանդարտներով⁴⁸, ինչն էլ հիմք է հանդիսացել ՀՊ ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցի 1-ին մասի 9-րդ կետի կարգավորումների համար: Վերջինս հետհսկողական գործընթացների իրականացման քայլեր չի նախատեսում, այլ ընդամենը սահմանում է հետհսկողական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նպատակով հաշվեթևության օբյեկտից հարցում իրականացնելու համար կիրառվող ձևաչափը:

⁴⁶ www.armsai.am էլեկտրոնային կայք, փաստաթղթեր բաժին՝ ընթացիկ եզրակացություններ:

⁴⁷ ISSAI3000, *Performance Audit Standard*, <https://www.issai.org/wp-content/uploads/2019/08/ISSAI-3000-Performance-Audit-Standard.pdf> (դիտված՝ 07.08.2023):

⁴⁸ IFPP, *International Standards of Supreme Audit Institutions*, <https://www.issai.org/professional-pronouncements> (դիտված՝ 07.08.2023):

3. ՀՀ կառավարության և խորհրդարանի դերը հաշվետվողականության ապահովման գործում


3.1 ՀՀ կառավարության մասնակցությունը հաշվետվողականության գործընթացին

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ ՀՊ-ն ընթացիկ եզրակացությունները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ԱԺ և Կառավարություն: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ՀՊ-ն այլ գրավոր տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը և ներկայացնում ՀՀ ԱԺ և Կառավարություն:

Եթե ԱԺ պարագայում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովն ուսումնասիրում է ՀՊ ընթացիկ եզրակացությունները, իսկ առկայության դեպքում՝ նաև հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կողմից ընթացիկ եզրակացության վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը, ապա Կառավարության դեպքում ՀՊ կողմից ներկայացվող եզրակացությունները և այլ գրավոր տեղեկատվությունն ուսումնասիրելու կամ դրանից բխող այլ գործողություններ նախատեսող օրենսդրական և ենթաօրենսդրական հստակ և անմիջապես ՀՊ եզրակացություններին վերաբերելի կարգավորումներ Կառավարության և վարչապետի աշխատակազմի համար սահմանված չեն:

Վերոնշյալ փաստի վերաբերյալ ԹԻՀԿ դիմումին ի պատասխան՝ ՀՀ կառավարությունը հայտնել է, որ ՀՊ ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ բարձրացված հարցերի (այդ թվում՝ դրանց վերաբերող այլ գրավոր տեղեկատվության, դրանցով սահմանված առաջարկությունների իրականացման, առաջարկությունների հիման վրա գերատեսչությունների կողմից մշակված միջոցառումների ընթացքի նկատմամբ հսկողական մեխանիզմների) մասով հատուկ ընթացակարգեր նախատեսված չեն: Ըստ այդմ, այդ փաստաթղթերին ընթացք է տրվում յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով ներկայացվող տեղեկատվության բովանդակությունը:

Գծապատկեր 7. ՀՀ կառավարության մասնակցությունն արտաքին հաշվետվողականության գործընթացին⁴⁹



⁴⁹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմնվելով գործող իրավակարգավորումների և հետազոտության արդյունքների վրա:

Փաստացի, ՀՀ կառավարության գործիքակազմում առկա չեն կոնկրետ հաշվեքննության մասով ընթացակարգեր կամ կարգավորումներ, որոնք հնարավորություն կտային արդյունավետ և նպատակային կերպով օգտագործել ՀՊ կողմից տրամադրված տեղեկատվությունը: Նշված ընթացակարգերի բացակայությունը մի կողմից կարող է ստեղծել համապատասխան պաշտոնատար անձանց կողմից որոշումների կայացման էական դժվարություններ և անհարմարություններ, մյուս կողմից կարող է զգալի ռիսկեր պարունակել գործընթացի առավել արդյունավետ կազմակերպումն ապահովելու համար՝ մասնավորապես քաղաքական հայեցողությամբ հաշվետվողականություն իրականացնելու մասով:

Աուդիտի (հաշվեքննության) բարձրագույն մարմինների և Կառավարության փոխգործակցության մոտեցումները տարբեր երկրներում տարբեր կերպ են կարգավորվում, սակայն դրանցում հիմնական շեշտադրումը վերաբերում է այդ մարմինների անկախության խնդրին: Քանի որ աուդիտի բարձրագույն մարմնի և Կառավարության փոխգործակցությունը կարող է ազդել առաջինների անկախության վրա, շատ երկրներ օրենսդրորեն սահմանափակում են այդպիսի համագործակցությունը՝ փոխարենը համագործակցության լայն շրջանակներ սահմանելով աուդիտի բարձրագույն մարմնի և խորհրդարանական կառույցների միջև: Իսկ Կառավարության հետ փոխգործակցության համար օրենսդրական կարգավորումները շեշտադրում են հետհսկողական մեխանիզմի կարևորությունը և դրանց ընթացքում առաջացող կոնֆլիկտների վերաբերյալ խորհրդարանին տեղեկացնելը: Այսպես՝

- **Միացյալ Նահանգների** Կառավարության հաշվետվողականության գրասենյակը⁵⁰ (Government Accountability Office - GAO) գործում է կառավարությունից անկախ, և համագործակցում է Կոնգրեսի հետ: Այն իր ստացած արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում Կոնգրեսին փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու համար: Չնայած դրան, գրասենյակը նաև համագործակցում է դաշնային գործակալությունների հետ՝ նրանց տրամադրելով Կառավարության ծրագրերն ու գործառնությունները բարելավելու վերաբերյալ առաջարկություններ: Չեկոյցներ հրապարակելուց հետո Կառավարության հաշվետվողականության գրասենյակը համագործակցում է համապատասխան դաշնային գործակալությունների հետ՝ հետևելու առաջարկությունների կատարմանը: Գրասենյակը պարբերաբար զեկուցում է Կոնգրեսի հանձնաժողովներին իր առաջարկությունների կարգավիճակի մասին՝ նպաստելով կառավարության հետ շարունակական երկխոսությանը և համագործակցությանը⁵¹:
- **Միացյալ Թագավորության** Ազգային աուդիտի գրասենյակը հետևում է իր առաջարկություններին՝ վերահսկելով Կառավարության գործողությունները և գնահատելով, թե որքանով են դրանք իրականացվել⁵²: Այս գործընթացի պատշաճ իրականացման համար մեծ դեր է խաղում Միացյալ Թագավորության խորհրդարանի Հանրային հաշիվների կոմիտեն, որը պետական պաշտոնյաներին կարող է ենթարկել պատասխանատվության Ազգային աուդիտի գրասենյակի առաջարկությունները չկատարելու համար⁵³:

⁵⁰ GAO, *Reports and Testimonies*, <https://www.gao.gov> (դիտված՝ 07.08.2023):

⁵¹ GAO, *High-Risk List*, <https://www.gao.gov/highrisk> (դիտված՝ 07.08.2023):

⁵² National Audit Office, *Reports*, <https://www.nao.org.uk/> (դիտված՝ 07.08.2023):

⁵³ UK Parliament - Public Accounts Committee, <https://committees.parliament.uk/committee/127/public-accounts-committee> (դիտված՝ 07.08.2023):

- **Գերմանիայի** Աուդիտորների դաշնային գրասենյակը վերահսկում է իր աուդիտի առաջարկությունների կատարումը՝ համագործակցելով դաշնային նախարարությունների և գործակալությունների հետ, իսկ Բունդեսթագի բյուջետային հանձնաժողովը վերահսկում է Կառավարության արձագանքն աուդիտի արդյունքներին և առաջարկություններին⁵⁴:
- **Ֆրանսիայի** Աուդիտորների դատարանը հետևում է իր առաջարկություններին Կառավարության գործողությունների կանոնավոր գնահատման միջոցով, իսկ Ֆրանսիայի խորհրդարանի ֆինանսական կոմիտեն ուսումնասիրում է Կառավարության առաջընթացը⁵⁵:
- **Շվեդիայի** Ազգային աուդիտի գրասենյակը ոչ միայն վերահսկում է Կառավարության արձագանքներն իր առաջարկություններին, այլ նաև գնահատում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը⁵⁶: Շվեդիայի խորհրդարանը, մասնավորապես՝ ֆինանսական կոմիտեն, աուդիտի հաշվետվությունների հիման վրա վերահսկում և վերանայում է Կառավարության գործողությունները՝ դրանց հիմքում դնելով աուդիտի հաշվետվությունները⁵⁷:

Վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երկրները որդեգրել են հիմնականում միանման գործելակարգեր, որը միաժամանակ համահունչ է նաև «Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI)» ստանդարտներով⁵⁸ աուդիտի բարձրագույն մարմնի և Կառավարության փոխգործակցության վերաբերյալ կարգավորումներին: Վերոնշյալ երկրների փորձը նաև ցույց է տալիս, որ չնայած առկա են աուդիտի բարձրագույն մարմինների և Կառավարության միջև փոխգործակցության վերաբերյալ որոշ սահմանափակումներ, սակայն դրանք որևէ կերպ չեն կաշկանդում Կառավարությանը՝ աուդիտի բարձրագույն մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների իրականացման նկատմամբ իրականացնելու հսկողական գործընթացներ: Առանձին երկրներում առաջարկությունների իրականացման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմին զուգահեռ գործում է նաև Կառավարության կողմից հսկողության մեխանիզմ, որը կարող է իրականացվել համապատասխան լիազորությամբ օժտված գրասենյակների միջոցով:

ՀՀ-ում նման վերահսկողական գործառույթներով օժտված կառույցը ՊՎԾ-ն է: «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՊՎԾ գործունեության նպատակն է ապահովել վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը: Օրենքի 5-րդ հոդվածը և ՊՎԾ կանոնադրության 9-րդ կետը սահմանում են, որ նշված նպատակի հիման վրա ծառայությունը պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ՝

⁵⁴ Federal Court of Auditors (Bundesrechnungshof), <https://www.bundesrechnungshof.de/en> (նիստված՝ 07.08.2023):

⁵⁵ Court of Auditors (Cour des comptes), <https://www.ccomptes.fr/en> (նիստված՝ 07.08.2023):

⁵⁶ Swedish National Audit Office (Riksrevisionen), <https://www.riksrevisionen.se/in-english.html> (նիստված՝ 07.08.2023):

⁵⁷ Swedish Parliament (Riksdag) - Committee on Finance, <https://www.riksdagen.se/en/how-the-riksdag-works/committees/finance-committee> (նիստված՝ 07.08.2023):

⁵⁸ IFPP, *International Standards of Supreme Audit Institutions*, <https://www.issai.org/professional-pronouncements> (նիստված՝ 07.08.2023):

ա) ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ վարչապետի որոշումների և հանձնարարականների, ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերի, այդ թվում՝ հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով,

բ) դրանց գործունեության օրինականության և արդյունավետության վերահսկողության նպատակով,

գ) պետական միջոցների կառավարման և ձևավորման արդյունավետության և օրինականության վերահսկողության նպատակով:

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի⁵⁹ 6-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնասիրության արդյունքներն ամփոփվում են համապատասխան տեղեկանքով, որը տրամադրվում է վերահսկվող օբյեկտին դրա վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքները, ներառյալ՝ տեղեկանքը և դրա վերաբերյալ վերահսկվող օբյեկտի կողմից ներկայացված կարծիքը, զեկուցվում են վարչապետին և կարող են հիմք հանդիսանալ վարչապետի կողմից համապատասխան հանձնարարականներ տալու և պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դրանց կիրառման մասին հանձնարարականներ տալու համար:

Այսպես, համաձայն ՊՎԾ կանոնադրության 4-րդ կետի⁶⁰, իրականացված վերահսկողության արդյունքներով ծառայությունը վերլուծում է արձանագրված խախտումները, խնդիրները, դրանց պատճառները, հանգամանքներն ու հետևանքները՝ դրանց վերաբերյալ վարչապետին ներկայացնելով տեղեկանքներ և զեկույցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ դրա վերաբերյալ հանձնարարական տալու առաջարկություններ: Իսկ կանոնադրության 5-րդ կետը սահմանում է, որ վերահսկողության արդյունքների ամփոփման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման առկա բացթողումների և թերությունների վերացման վերաբերյալ վարչապետին ու վերահսկվող օբյեկտներին ներկայացվում են առաջարկություններ:

ՊՎԾ կողմից իրականացված ուսումնասիրությունների և վերահսկողությունների վերաբերյալ հանրային հաշվետվողականության որևէ կարգավորում ինչպե՛ս օրենքով, այնպե՛ս էլ տվյալ մարմնի կանոնադրությամբ նախատեսված չէ: Ավելին, առկա չեն կարգավորումներ նաև դրանց վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ տարածելու, հայտարարություններով կամ ասուլիսներով հանդես գալու վերաբերյալ: ՊՎԾ պաշտոնական կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրությունների և վերահսկողության արդյունքների վերաբերյալ հրապարակումներ առկա չեն, սակայն կայքում առկա է «Հաղորդագրություններ» բաժինը, որտեղ ՊՎԾ-ն իր հայեցողությամբ, երբեմն, հանրայնացնում է իրականացված ուսումնասիրությունների որոշ արդյունքներ:

⁵⁹ «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120947> (դիտված՝ 10.08.2023):

⁶⁰ ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի «ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 696-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137871> (դիտված՝ 15.08.2023):

ՊՎԾ պաշտոնական կայքի «Հաղորդագրություններ» բաժնի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2020-2023 թվականների ընթացքում կրթության ոլորտում իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ առկա է 6 հրապարակում, որից 4-ը վերաբերում են ԲՈՒՀ-երում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներին, և մեկական հաղորդագրություն [«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում](#) և [«Հայաստանի պետական ֆինանսական նվաճախումք»](#) և [«Գ. Սունդուկյանի անվան ազգային-ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ներում](#) իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ: Նշված բոլոր դեպքերում արձանագրվել են խախտումներ, որոնց մասին զեկուցվել է վարչապետին, որոշ դեպքերում էլ նախաձեռնվել են քրեական վարույթներ: Հանրակրթության ոլորտում իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ պաշտոնական հրապարակումներ կայքում առկա չեն:

Ի պատասխան ԹԻՀԿ հարցմանը՝ ՊՎԾ-ն 2023թ. օգոստոսի 28-ին տրամադրել է պարզաբանում, որում նշել է, որ 2019-2022 թվականների ընթացքում ՀՀ հանրակրթության ոլորտում ՊՎԾ կողմից ուսումնասիրություններ չեն իրականացվել: Ինչ վերաբերում է ՊՎԾ կողմից ուսումնասիրությունների իրականացմանը և դրանց պլանավորմանը, ապա նշվել է, որ ՊՎԾ լիազորության շրջանակներում ուսումնասիրություններն իրականացվում են ՊՎԾ ղեկավարի տված հանձնարարագրերի հիման վրա՝ համաձայնեցնելով վարչապետի հետ:

Ներկայացված տեղեկատվությունը փաստում է, որ ՊՎԾ կողմից պետական բյուջեի հանրակրթության ծրագրի հաշվետվողականության գործընթացին որևէ մասնակցություն փաստացի չի եղել: Մինչդեռ ՊՎԾ-ն փաստացի միակ կառույցն է, որն օժտված է տեղում (տվյալ դեպքում ԿԳՄՍՆ-ում) ընթացիկ հսկողական աշխատանքներ իրականացնելու լիազորություններով և գործիքակազմով:

Հաշվետվողականության գործընթացում բացակայում է նաև Կրթության տեսչական մարմինը: Թեև ԿՏՄ-ի կանոնադրական նպատակներում հաշվետվողականության ապահովման վերաբերյալ լիազորություն նախատեսված չէ, տվյալ մարմինն ունի տեսչական ստուգումներ իրականացնելու լայն գործիքակազմ, որի նպատակային օգտագործումը կարող էր նպաստել հաշվետվողականության գործընթացի բարելավմանը:

Ակնհայտորեն, վերահսկողության արդյունավետության բարձրացման տեսանկյունից առավել նպատակահարմար է համակարգված մոտեցումների կիրառումը, որը թույլ կտար ՀԴ-ին տարեկան ուսումնասիրությունների ծրագրերը որոշակիորեն համադրել այլ մարմինների աշխատանքների հետ, այլ ոչ թե յուրաքանչյուր անգամ ուսումնասիրությունը կամ վերահսկողությունն իրականացնել առանձին հանձնարարականի հիման վրա՝ առանց առնչվելու պետությունում գործող ընդհանուր համակարգի այլ կառույցների գործողություններին:

3.2 ԱԺ վերահսկողության դերը հաշվետվողականության գործընթացում

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀԴ-ը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների և տարեկան կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները համապատասխանաբար այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ 4 ամսվա ընթացքում, ներկայացնում է ինչպե՛ս Կառավարությանը, այնպե՛ս էլ ՀՀ ԱԺ-ին (Գծապատկեր 5): Այս գործընթացով են ներկայացվում ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ տեղեկատվությունը:

Մինևույն ժամանակ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, ՀԴ-ն իր գործունեության ծրագիրը, ընթացիկ եզրակացությունները, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը և գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը հաստատելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն ներկայացնում է ԱԺ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն⁶¹՝ ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովն ուսումնասիրում է ՀԴ ընթացիկ եզրակացությունները, իսկ առկայության դեպքում՝ նաև հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կողմից ընթացիկ եզրակացության վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը: Ուսումնասիրության արդյունքով հանձնաժողովը դրանք քննարկելու համար կարող է որոշում կայացնել՝ հրավիրելու հանձնաժողովի նիստ կամ ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ նիստ:

ՀՀ ԱԺ աշխատակարգը հաստատելու մասին ԱԺՈ-267-Ն որոշման 115-րդ կետի 11 ենթակետի⁶² համաձայն՝ ԱԺ բյուջետային գրասենյակի գործառույթների թվին են դասվում նաև ՀԴ գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների, պետական բյուջեի կատարման վերաբերյալ և ընթացիկ եզրակացությունների մասին տեղեկանքների տրամադրումը:

Համաձայն ՀՀ ԱԺ 2021թ. օգոստոսի 6-ի «ՀՀ ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ԱԺՈ-001-Ն որոշման⁶³ 1-ին կետի 1-ին ենթակետի ժբ) պարբերության՝ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտների թվում են «առուդիտը և հաշվեքննությունը»: Ըստ ՀՀ ԱԺ կողմից 29.08.2023թ. ԹԻՀԿ-ին տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ ՀԴ ընթացիկ եզրակացությունները սահմանված կարգով ԱԺ նախագահին ներկայացվելուց հետո ուղարկվում են ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով ուսումնասիրելու նպատակով: Հաշվեքննվող մարմնի կողմից ՀԴ-ին ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ

⁶¹ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 115, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185339> (դիտված՝ 15.08.2023):

⁶² ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱԺՈ-267-Ն որոշում, 115-րդ կետի 11 ենթակետ, <https://www.arlis.am/documentView.aspx?docID=121700> (դիտված՝ 15.08.2023):

⁶³ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի «ՀՀ ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ԱԺՈ-001-Ն որոշում, <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha<ype=4&lang=arm> (դիտված՝ 15.08.2023):

գրավոր տեղեկատվություն ներկայացվելու դեպքում այն ևս սույն փաստաթղթի 1-ին կետում նկարագրված ընթացակարգին համապատասխան ուղարկվում է ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով համապատասխան ընթացիկ եզրակացությունների հետ համատեղ ուսումնասիրելու նպատակով:

Համաձայն ԱԺ կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով ուղարկված ՀՊ բոլոր ընթացիկ եզրակացությունները հանձնաժողովի նախագահը «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով ուղարկում է հանձնաժողովի անդամներին և փորձագետներին: Վերջիններս ներկայացված ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ կազմում են տեղեկանքներ, որի եզրափակիչ մասում ներկայացնում են հանձնաժողովի կամ այլ ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ նիստ հրավիրելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկ՝ ներկայացնելով դրանց վերաբերյալ համապատասխան հիմնավորում: Նիստ հրավիրելու առաջարկի հիմքում դրվում է ընթացիկ եզրակացությունում տեղ գտած անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ծավալը, հաշվեթևության թեմայի վերաբերյալ հանրային հետաքրքրության (հնչեղության) մակարդակը, հաշվեթևավոր մարմնի արդյունավետության վերաբերյալ գնահատականը, օգտագործված հանրային միջոցների մեծությունը, այլ գործոններ: Պատրաստված տեղեկանքները ներկայացվում են հանձնաժողովի նախագահին, ով նյութերին ծանոթանալուց հետո կարող է հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծում ներառել ՀՊ ընթացիկ եզրակացությունը քննարկելու նպատակով նիստ հրավիրելու հարցը, որն ընդունվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան⁶⁴:

2020-2022թ. ընթացքում⁶⁵ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում և ոլորտային այլ հանձնաժողովներում (3 դեպքում՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովում, մեկ դեպքում՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովում, և մեկ դեպքում էլ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում) կազմակերպվել են ՀՊ եզրակացությունների հիման վրա քննարկումներ, որոնցից սակայն կրթության ոլորտին վերաբերել է միայն մեկը, որը կազմակերպվել է 2023թ. հունիս ամսին և վերաբերել է 2022 թվականի տարեկան հաշվեթևության արդյունքներին: Քննարկումը տեղի է ունեցել ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի համատեղ նիստում⁶⁶:

⁶⁴ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 15, մաս 7, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824> (դիտված՝ 12.08.2023):


⁶⁵ 2023 թվականին հրավիրվել է թվով ևս 4 համատեղ նիստ (20.01.2023թ., 09.02.2023թ., 18.05.2023թ., 23.06.2023թ.): Համաձայն ԱԺ-ից ստացված տեղեկատվության՝ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների հաջորդ համատեղ նիստը նախատեսվում է հրավիրել 2023 թ. դեկտեմբերին:

⁶⁶ ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստ. ուղիղ հեռարձակում, <https://www.youtube.com/watch?v=apCFjC4KpTQ> (դիտված՝ 12.08.2023):

Ի պատասխան ԹԻՅԿ-ի կողմից ԱԺ-ին ուղղված ՀՊ ընթացիկ եզրակացությունները հանձնաժողովի նիստում քննարկման ներկայացնելու ընթացակարգի մասին հարցադրմանը՝ նշվել է, որ հարցը կարգավորվում է միայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածով, համաձայն որի՝ նիստ հրավիրելու համար իրավասու է ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը: Միևնույն ժամանակ, ցանկացած հանձնաժողով կամ պատգամավոր կարող է աշխատանքային կարգով իրավասու հանձնաժողովի հետ քննարկել նիստ կամ համատեղ նիստ հրավիրելու առաջարկ: Նշվել է նաև, որ նման նիստեր գումարելու առաջարկ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը դեռ չի ստացել:

Չնայած ԱԺ կողմից ներկայացված գործելակարգի նկարագրությանը, չպարզաբանված է մնում այն հանգամանքը, թե ինչպիսի մեթոդաբանությամբ է ընտրվում ԱԺ մշտական հանձնաժողովի նիստում քննարկման ենթակա ընթացիկ եզրակացությունները: Նման մեթոդաբանություն փաստացի ԱԺ-ն չունի, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես գործընթացի արդյունավետության վրա, այնպես էլ եզրակացությունների ընտրության ժամանակ քաղաքական առաջնահերթությունների ընդգրկման տեսանկյունից:

Գծապատկեր 8. Արտաքին հաշվետվողականության գործընթացի խորհրդարանական վերահսկողության մեխանիզմը⁶⁷



Հանձնաժողովի նիստում ՀՊ եզրակացության քննարկման արդյունքների փաստաթղթավորման, սղագրման կամ համառոտագրման (բացառությամբ տեսանկարահանման և ԱԺ պաշտոնական կայքում հրապարակված նորությունների), ինչպես նաև ԱԺ մշտական հանձնաժողովների և աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից քննարկման արդյունքների իրագործման նկատմամբ հսկողության մեխանիզմների վերաբերյալ ԹԻՅԿ հարցմանն ԱԺ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՀՊ ընթացիկ եզրակացությունները քննարկելու նպատակով ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի կամ ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ նիստերի ծայնագրությունները պահվում են

⁶⁷ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմնվելով գործող իրավակարգավորումների և հետազոտության արդյունքների վրա:

հանձնաժողովի քարտուղարությունում և կարող են վեր հանվել անհրաժեշտության դեպքում»: Աժ պաշտոնական կայքի ուսումնասիրությամբ պարզվեց, որ կայքի արխիվային բաժիններում հասանելի են նիստերի մասին համառոտ տեղեկատվությունը⁶⁸, իսկ Աժ [Յուրօրվան պաշտոնական էջի](#) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հասանելի են նշված քննարկումների ամբողջական տեսագրությունները, որոնք հեռարձակվել են ուղիղ եթերով:

Աժ մշտական հանձնաժողովները և պատգամավորներն իրավասու են օրենքով սահմանված կարգով ընթացիկ եզրակացություններում ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին: Աժ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը տեղեկատվություն ստանալու համար օգտվում է տվյալ իրավասությունից:

Ուշադրության է արժանի նաև Աժ հանձնաժողովների կարողություններին առնչվող հարցը: Մասնավորապես, պայմանավորված հանձնաժողովում ներառված պատգամավորների մասնագիտական տարբեր ուղղվածություններով ու քաղաքական հայացքներով և, միաժամանակ, չապահովելով մասնագիտացված կառույցների, ՔՀԿ-ների և ոլորտի մասնագետների ներգրավում, համատեղ նիստերում հարցերի քննարկումը հիմնականում ստանում է քաղաքական ենթատեքստ և չի պարունակում խորը և համապարփակ մասնագիտական մոտեցումներ⁶⁹:

Խորհրդարանական մարմինների կողմից արտաքին պետական հաշվեքննության զեկույցների հիման վրա խորհրդարանական վերահսկողության իրականացման միջազգային փորձը բավականին հարուստ է և համահունչ «Առողիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI)» ստանդարտներին⁷⁰: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ստանդարտների մշակման համար կիրառվում են առավել առաջադեմ և արդյունավետ մոտեցումներ, իսկ կազմակերպության անդամ երկրներն օրենսդրական բարելավումների միջոցով մշտապես փորձում են գործող իրավակարգավորումները համապատասխանեցնել միջազգային ստանդարտների պահանջներին:

Չնայած ընդհանուր կանոնների վերաբերյալ միասնական մոտեցմանը, գործընթացների իրականացման մակարդակում տարբեր երկրներ որդեգրում են տարբեր մոտեցումներ և վերահսկողական մեխանիզմներ, որոնք մի կողմից սահմանում են առողիտի բարձրագույն մարմնի կողմից խորհրդարանին զեկույցների ներկայացման կարգը, մյուս կողմից՝ խորհրդարանական վերահսկողության շրջանակներում նախատեսված գործընթացները: Մասնավորապես՝

⁶⁸ Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, http://www.parliament.am/committees.php?lang=arm&do=show&ID=111227&cat_id=&show_session=&month=11&year=2023 (դիտված՝ 12.08.2023):

⁶⁹ Խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ առավել համապարփակ վերլուծության արդյունքները, այդ թվում՝ նաև կարողությունների գնահատման վերաբերյալ հարցերը ներկայացված են ԹԻՅԿ կողմից հրապարակված «Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի գնահատման զեկույց» հետազոտության մեջ:

⁷⁰ IFPP, *International Standards of Supreme Audit Institutions*, <https://www.issai.org/professional-pronouncements> (դիտված՝ 12.08.2023):

- **Միացյալ Թագավորությունում** Ազգային աուդիտի գրասենյակը⁷¹ իրականացված հաշվեքննությունների (աուդիտների) վերաբերյալ իր հաշվետվությունները ներկայացնում է անմիջապես Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Հանրային հաշիվների կոմիտեին (Public Accounts Committee): Վերջինս ուսումնասիրում է հաշվետվությունների արդյունքները և անցկացնում լսումներ, որտեղ Ազգային աուդիտի գրասենյակի պաշտոնյաները ներկայացնում են իրենց արդյունքները և պատասխանում հանձնաժողովի անդամների հարցերին: Հիմնվելով հաշվետվության արդյունքների և լսումների ժամանակ տեղի ունեցած քննարկումների վրա՝ Հանրային հաշիվների կոմիտեն կարող է առաջարկություններ ներկայացնել Կառավարությանը: Այս գործընթացի հանրայնացման վերաբերյալ Կոմիտեի պաշտոնական կայքում ներկայացվում են առանձին հայտարարություններ, որոնք արտացոլում են ինչպե՛ս լսումների ժամանակացույցը, այնպե՛ս էլ քննարկումների կամ գործողությունների կարգավիճակը⁷²:
- **Գերմանիայի** Աուդիտորների դաշնային դատարանը⁷³ (Bundesrechnungshof) իր աուդիտի հաշվետվությունները ներկայացնում է Գերմանիայի Բունդեսթագ՝ դաշնային խորհրդարան: Բունդեսթագի բյուջետային հանձնաժողովն այս զեկույցների հիմնական ստացողն է: Այն քննարկում է աուդիտի արդյունքները և անհրաժեշտության դեպքում Աուդիտորների դաշնային դատարանից ստանում պարզաբանումներ և մեկնաբանություններ:
- **Ֆրանսիայի** Աուդիտորների դատարանը⁷⁴ (Cour des comptes) ներկայացնում է իր տարեկան հաշվետվությունները Ֆրանսիայի համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներին՝ ըստ դրանց ուղղվածությունների: Հանձնաժողովները, ինչպիսիք են, օրինակ, Ֆինանսական հանձնաժողովը և Սոցիալական հարցերի հանձնաժողովը, ուսումնասիրում են հաշվետվությունները, իրենց հերթին «հարցաքննում են» Աուդիտորների դատարանի ներկայացուցիչներին և օգտագործում են այս տեղեկատվությունն իրենց վերահսկողական գործունեության մեջ:
- **Իսպանիայի** Աուդիտորական դատարանը⁷⁵ (Tribunal de Cuentas) իր զեկույցները ներկայացնում է Իսպանիայի խորհրդարանին, մասնավորապես՝ Պատգամավորների Կոնգրեսին: Խորհրդարանական հանձնաժողովները, ինչպես օրինակ, Բյուջեի և հանրային հաշիվների հանձնաժողովը, իրավասություն ունեն վերանայելու զեկույցները և Աուդիտորական դատարանի ներկայացուցիչների հետ անցկացնելու քննարկումներ:
- **Շվեդիայի** փորձն առավել նման է ՀՀ-ում գործող համակարգին: Շվեդիայի Ազգային աուդիտի գրասենյակը⁷⁶ (Riksrevisionen) իր զեկույցները ներկայացնում է Շվեդիայի խորհրդարանին, որի Ֆինանսական հանձնաժողովը խորհրդարանական առանցքային հանձնաժողովներից է և պատասխանատու է աուդիտորական հաշվետվությունների ուսումնասիրության, ինչպես նաև աուդիտի ենթարկված կազմակերպությանը և Ազգային աուդիտի գրասենյակին քննարկումներում ներգրավելու համար⁷⁷:

⁷¹ National Audit Office (NAO), *Reports and Publications*, <https://www.nao.org.uk> (նիսված՝ 15.08.2023):

⁷² UK Parliament - Public Accounts Committee, <https://committees.parliament.uk/committee/127/public-accounts-committee> (նիսված՝ 12.08.2023):

⁷³ Federal Court of Auditors (Bundesrechnungshof), <https://www.bundesrechnungshof.de/en> (նիսված՝ 12.08.2023):

⁷⁴ Court of Auditors (Cour des comptes), <https://www.ccomptes.fr/en> (նիսված՝ 12.08.2023):

⁷⁵ Court of Audit (Tribunal de Cuentas), <https://www.tcu.es/en> (նիսված՝ 12.08.2023):

⁷⁶ Swedish National Audit Office (Riksrevisionen), <https://www.riksrevisionen.se/in-english.html> (նիսված՝ 12.08.2023):

⁷⁷ Swedish Parliament (Riksdag) - Committee on Finance, <https://www.riksdagen.se/en/how-the-riksdag-works/committees/finance-committee> (նիսված՝ 12.08.2023):

- **ՏՀԶԿ (OECD) երկրները** տարեկան հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունների համար որպես առավել արդյունավետ մոտեցում դիտարկում են զեկույցների վերաբերյալ պարտադիր քննարկումների կազմակերպումը⁷⁸: Ավելին, առևտրի բարձրագույն մարմինների գործունեության աջակցության լավագույն ձևը վերջիններիս կողմից կատարված աշխատանքների արդյունքները կիրառելն է, որն, իր հերթին, կարող է նպաստել ոչ միայն հաշվեքննության արդյունքների իրականացմանը, այլև նաև առևտրի մարմինների աշխատանքի որակն ու պրոֆեսիոնալիզմը բարելավելուն:

Ներկայացված երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք հաշվետվողականության ապահովման գործընթացում առևտրի բարձրագույն մարմինների կողմից ներկայացված զեկույցների ազդեցության բարելավման նպատակով փորձում են հնարավորինս բարձրացնել դրանց կիրառականությունը: Այդ նպատակով երկրների խորհրդարաններն, օգտագործելով իրենց վերահսկողական գործիքակազմը, իրականացնում են զեկույցների քննարկումներ, ինչպես նաև ներկայացված առաջարկությունների վերաբերյալ իրականացնում են տարատեսակ հսկողական միջոցառումներ:

Թեև ՀՀ-ում գործող կարգավորումներն, ընդհանուր առմամբ, համահունչ են ներկայացված միջազգային փորձին, առանձին կարգավորումների՝ հատկապես խորհրդարանական վերահսկողության գործիքների կիրառման մասով առկա է բարելավման անհրաժեշտություն, որն էլ ավելի կուժեղացնի խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները և կբարձրացնի հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը:

Գծապատկեր 9. «Հանրակրթություն» ծրագրի հաշվետվողականության ակտիվ և չգործող ուղիները⁷⁹



⁷⁸ OECD, *Good Practices in Supporting Supreme Audit Institutions*, <https://www.oecd.org/dac/effectiveness/Final%20SAI%20Good%20Practice%20Note.pdf> (դիտված՝ 12.08.2023):

⁷⁹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմնվելով գործող իրավակարգավորումների և հետազոտության արդյունքների վրա:

Հիմնվելով հետազոտության մեջ տեղ գտած վերլուծությունների վրա՝ *Գծապատկեր 9*-ում կանաչ գույնով ներկայացվել են Հայաստանում հաշվետվողականության համակարգի այն ուղիները, որոնք այժմ գործում են՝ ապահովելով տեղեկատվության փոխանցումն ու թափանցիկությունը, իսկ կարմիրով՝ նրանք, որոնք կա՛մ գործող իրավակարգավորումներով նախատեսված չեն, կա՛մ լիարժեք չեն և, համապատասխանաբար, չեն գործում: Ինչպես երևում է, հաշվետվողականության ներկայիս մեխանիզմը փաստացի իրականացվում է ՀԴ-ի ու ԿԳՄՄՆ ներգրավմամբ, որտեղ վերջինս հանրակրթության ծրագրի իրականացման պատասխանատուն և հաշվետվողականության գործընթացի հիմնական կատարողն է, որտեղ ՀԴ-ն լիազորված է իրականացնել արտաքին պետական հաշվեքննություն: ԱԺ-ն և Կառավարությունն ունեն պասիվ դերակատարում, իսկ ՊՎԾ-ն 2020-2022 թվականներին այս գործընթացներում առհասարակ ներգրավված չի եղել: Միաժամանակ, հաշվետվողականության համակարգի ոչ լիարժեքության հետևանքով հանրությունը ժամանակին և ամբողջ ծավալով չի տեղեկացվել և չի ներգրավել գործընթացում, իսկ պատասխանատու կառույցների կողմից հանրային իրազեկվածության բարձրացման ուղղությամբ հստակ քայլեր չեն իրականացվել:

Այսպիսով, թեև ԱԺ-ն և Կառավարությունը (ներառյալ ՊՎԾ-ն) հաշվետվողականության ապահովման գործընթացում ունեն աջակցող դերակատարում, սակայն հաշվետվողականության գործընթացում դերերի լիարժեք բաշխման և պարտականությունների ամբողջական իրականացման պարագայում է միայն հնարավոր հասնել հաշվետվողականության մեխանիզմի լիարժեք աշխատանքին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրակրթության ծրագրի հաշվետվողականության վերաբերյալ սույն հետազոտության առանձին բաղադրիչների ուսումնասիրությունը, օրենսդրական կարգավորումների և փաստացի իրավիճակի, ինչպես նաև հաշվետվողականության մեխանիզմի և հիմնական դերակատարների ծավալած գործունեության արդյունքների վերլուծությունը հնարավորություն են տվել բացահայտելու հաշվետվողականության համակարգի խնդիրները և այն օղակները, որոնք լիարժեք չեն կամ էական բարելավումների կարիք ունեն:

- Խնդրահարույց է հաշվեքննության ծածկույթի սահմանումը: ՀԴ կողմից իրականացվող հաշվեքննությունները հիմք են ընդունում իրականացման համար լիազոր մարմնի՝ որպես ծրագրերի կատարողի ներկայացրած հաշվետվությունները, մինչդեռ ՀՀ պետական բյուջեն կազմվում և ԱԺ կողմից հաստատվում է ըստ պատասխանատու գերատեսչությունների, և պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ժամանակ գերատեսչություններն ԱԺ-ին զեկուցում են որպես պետական բյուջեի ծրագրերի իրականացման պատասխանատուներ: Ծածկույթի այսպիսի ընտրությամբ սահմանափակվում է հաշվեքննության շրջանակը, իսկ ներկայացված արձանագրումները և եզրահանգումները վերաբերելի են դառնում բյուջեի միայն որոշ մասին: Ավելին, ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանության համաձայն, օբյեկտների ընտրությունն իրականացվում է ոչ թե ծախսերի ամբողջական ծավալի համար, այլ

Եականության սկզբունքի հիման վրա՝ ներառելով միայն «Եական» համարվող ծախսերը: Նույն մոտեցումը կիրառվում է կատարող մյուս մարմինների (Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ և Պաշտպանության նախարարություն) ենթակայությամբ գործող կազմակերպությունների նկատմամբ հաշվեթևության իրականացման դեպքում:

- Պետական բյուջեի ոչ ֆինանսական (արդյունաբային) ցուցանիշների և ֆինանսավորման ծավալների միջև կապը խզված է: Ծրագրային բյուջետավորման գործող համակարգի և հանրակրթության ծրագրի ֆինանսավորման առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ ցուցանիշների ուղիղ կապը երբեմն հիմնավորված չէ, մինչդեռ դրանք հիմք են ինչպե՛ս ծրագրի ֆինանսական պլանավորման, այնպե՛ս Էլ արդյունավետության գնահատման համար: Ընդ որում՝ արդյունաբային ցուցանիշների հավաստիությունն ու ամբողջականությունն առանցքային դերակատարում ունեն հաշվետվողականության համակարգի լիարժեք գործունեության համար:
- «Այլ տեղեկատվության» կամ «այլ գրավոր տեղեկատվության» հրապարակման վերաբերյալ օրենսդրական որևէ կարգավորում նախատեսված չէ, ինչը սահմանափակում է հանրության կողմից հաշվեթևությանն առնչվող բավարար և համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:
- ՀՊ կողմից հետհսկողական գործառույթի իրականացումը լիարժեք չէ օրենսդրական մակարդակում դրա ամրագրված չլինելու հետևանքով: Թեև ներքին իրավակարգավորումներով ՀՊ կողմից նախատեսված է հետհսկողության վերաբերյալ տեղեկության հավաքագրման համակարգ, իսկ շարունակական հաշվեթևությունների դեպքում՝ նաև հետհսկողություն իրականացնելու որոշակի հնարավորություն, սակայն ընթացակարգերի ոչ լիարժեք լինելը հանգեցնում է ՀՊ հետհսկողական գործառույթի թերի իրականացմանը կամ առհասարակ չիրականացմանը:
- ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրանցում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունն ԱԺ ներկայացնելուց հետո ընթացք չեն ստանում:
- Բավականին ցածր մակարդակի վրա է ՀՊ ընթացիկ եզրակացությունների և հաշվեթևությունների արդյունքների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը: Առկա չեն հանրային իրազեկման այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ ԶՀԿ-ների հետ քննարկումների կազմակերպումը, մամուլի ասուլիսները և/կամ հաղորդագրությունները, ինչի արդյունքում սահմանափակվում է հաստատությունների նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը: Մինևույն ժամանակ, հանրությունը հրապարակված ընթացիկ եզրակացություններին վերաբերում է ոչ թե որպես քաղաքականության բարելավման փաստաթուղթ, այլ որպես վերջնական ավարտված գործընթաց, ինչը նաև զսպում է գործադիր մարմնի նկատմամբ հանրային պահանջի ձևավորումը ներկայացված առաջարկությունները և բարեփոխումները կյանքի կոչելու համար:
- ԱԺ հանձնաժողովները չունեն սահմանված հստակ մեթոդաբանություն հանձնաժողովներում քննարկման համար հաշվեթևությունների ընտրության համար, և հանձնաժողովների անդամներն իրենք պետք է ընթացիկ եզրակացությունների ուսումնասիրությունից հետո հանդես գան նման նախաձեռնությամբ: Քննարկվող նյութի ընտրության մեթոդի բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ պետության համար

առանցքային կարևորության հարցեր պարունակող եզրակացությունները դուրս մնան քննարկումներից⁸⁰:

- ԱԺ հանձնաժողովների նիստերում ՀՊ ընթացիկ եզրակացությունների քննարկումներին չեն հաջորդում գործողություններ: Բացակայում է դրանց արդյունքում ձևավորված առաջարկությունների և նկատառումների իրականացման նկատմամբ հետագա հսկողական մեխանիզմը, որը զգալիորեն նվազեցնում է նույնիսկ իրականացված սահմանափակ քննարկումների արդյունավետությունը: Թեև ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստն ուղիղ եթերով հեռարձակվում է և հանրության ու զանգվածային լրատվամիջոցներին հնարավորություն է տալիս տեղեկանալ և հետագայում հետամուտ լինել առանձին հարցերի, սակայն նիստի ընթացքում կատարված եզրահանգումները կամ ներկայացված գործողությունները որևէ կերպ չեն փաստագրվում և հետագա կիրառություն չեն ստանում:
- ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրանցում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունը ՀՀ կառավարությունը ներկայացնելուց հետո, ի տարբերություն ԱԺ-ի, իրավական գործընթացներ առհասարակ նախատեսված չեն, և վարչապետի աշխատակազմը, ելնելով տեղեկատվության բնույթից, յուրաքանչյուր դեպքում պետք է առանձին որոշում կայացնի հետագա քայլերի վերաբերյալ: Կառավարությունը հանդիսանում է նաև լիազոր մարմնի վերադասն ու հսկողության իրականացման պատասխանատուն, ուստի և նման ընթացակարգերի բացակայությունը զգալիորեն բարձրացնում է առաջարկությունների չիրականացման կամ բարեփոխումների դանդաղեցման ռիսկերը, ինչպես նաև մեծացնում քաղաքական հայեցողությամբ վերահսկողություն իրականացնելու հավանականությունը:
- Կառավարության գործիքակազմում հստակ ընթացակարգերի բացակայությունը սահմանափակում է նաև ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրականացման նկատմամբ գործադիր մարմնի (Կառավարություն և Վարչապետի աշխատակազմ) կամ նրան ենթակա ՊՎԾ-ի կողմից շարունակական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունները:
- ՊՎԾ-ն իր ուսումնասիրությունների պլանավորման և իրականացման ընթացքում հաշվի չի առնում արտաքին վերահսկողություն իրականացնող այլ կառույցների (այդ թվում՝ ՀՊ և ԿՏՄ) ծրագրերը, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կատարված բացահայտումներն ու եզրահանգումները, խնդիր չի դրվում փոխլրացնելու դրանք՝ ոլորտի կառավարման առումով առավել համակողմանի և արդյունավետ բարեփոխումների հանգեցնելու նկատառումով:

⁸⁰ Նման ռիսկերը նվազեցնելու նպատակով մի շարք OECD երկրներ տարեկան հաշվեթևությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունների համար սահմանում են պարտադիր քննարկումների կազմակերպում, որը մի կողմից նպաստում է հաշվեթևությունների որակի բարելավմանը, իսկ մյուս կողմից նաև բարձրացնում է խորհրդարանական վերահսկողության լիազորությունները: OECD, Good Practices in Supporting Supreme Audit Institutions, <https://www.oecd.org/dac/effectiveness/Final%20SAI%20Good%20Practice%20Note.pdf> (ղիտված՝ 20.08.2023):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետվողականության պատշաճ մեխանիզմի ներդրման և գործարկման համար անհրաժեշտ է կատարել մի շարք բարեփոխումներ, սահմանել ընթացակարգեր և ընդլայնել գործողությունների շրջանակը: Ստորև ներկայացված առաջարկությունների իրականացումը թույլ կտա ապահովել ո՛չ միայն հանրակրթության, այլև՝ պետական բյուջեի մնացած ծրագրերի հաշվետվողականության ամբողջական և գործուն մեխանիզմ, որն էական ազդեցություն կթողնի նաև պետական բյուջեի կատարման կարգապահության և հանրային ֆինանսների օգտագործման արդյունավետության բարձրացման գործում:

Մասնավորապես՝ անհրաժեշտ է.

1. ՀՊ կողմից պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքնությունների իրականացման ժամանակ հաշվեքնության ծածկույթը սահմանել գերատեսչության բյուջեն՝ ո՛չ թե որպես զուտ կատարողի, ա՛յլ որպես բյուջեի ծրագրերի իրականացման պատասխանատուի: Նման մոտեցումը թույլ կտա եզրակացություններ կատարել ամբողջ պետական բյուջեի մասին, իսկ ստացված արդյունքները համադրելի կլինեն պետական բյուջեի հրապարակվող հաշվետվության, ինչպես նաև ԱԺ ներկայացվող հաշվետվությունների հետ:
2. Վերանայել «Հանրակրթություն» ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների համակարգը՝ այն համադրելի դարձնելով ծրագրի նկարագրի (անձնագրի) և դրանում արտացոլված միջոցառումների նպատակներին, ինչպես նաև դարձնելով առավել ամբողջական՝ ընդգրկելով ամբողջ հանրակրթության ոլորտի ցուցանիշները:
3. ՀՊ կողմից պաշտոնական կայքում եզրակացությունների հրապարակումից բացի հրապարակել նաև ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկությունները, որը հանրությանը կներկայացնի բավարար և համապատասխան տեղեկատվություն՝ հնարավորություն տալով նախաձեռնելու և իրականացնելու հանրային վերահսկողության միջոցառումներ:
4. Մշակել և իրականացնել միջոցառումների ծրագիր ՀՊ եզրակացությունների և հաշվեքնությունների արդյունքների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով քննարկումներ ԶՀԿ-ների հետ, հանդես գալ ասուլիսներով, տարածել հաղորդագրություններ և այլն:
5. Մշակել և ներդնել մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա ՀՊ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև դրա վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվությունն ԱԺ մշտական հանձնաժողովների նիստերում քննարկելու համար կատարել նպատակային ընտրություն՝ բացառելով կարևոր հարցեր և լուծումներ պարունակող հաշվեքնությունները քննարկումների օրակարգից դուրս թողնելու, ինչպես նաև քաղաքական հայեցողությամբ վերահսկողություն իրականացնելու հավանականությունը:
6. Օրենքով սահմանել ՀՊ կողմից հետհսկողության գործընթացը՝ որպես հաշվեքնության բաղկացուցիչ մաս՝ այն համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, ինչը

հնարավորություն կընձեռի նախատեսելու մեխանիզմները, ընդլայնելու հսկողական գործիքակազմը և բարելավելու հաշվեթևության արդյունավետությունը:⁸¹

7. Ներդնել ԱԺ նիստերում իրականացված քննարկումների արդյունքների հետագա կիրառումն ապահովող համակարգ, որը թույլ կտա ձեռք բերված պայմանավորվածությունները, օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ եզրահանգումները, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկները դարձնել գործողությունների ծրագիր՝ դրա իրականացման նկատմամբ կիրառելով խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները:
8. Մշակել և ներդնել հստակ մեխանիզմներ, որոնք կսահմանեն Կառավարության կողմից ՀՊ ընթացիկ եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությունը ստանալուց հետո ժամանակին և լիարժեք իրականացվող հսկողական գործընթացներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետի հանձնարարական՝ ուղղված ՊՎԾ-ին՝ իրականացնելու ընթացիկ հսկողություն հաշվեթևության ենթարկված կազմակերպության կողմից ներկայացված գործողությունների ծրագրի իրականացման նկատմամբ, իսկ գործողությունների ծրագրից շեղման կամ ստանձնած պարտականությունների չկատարման դեպքում՝ պատասխանատվության միջոցների կիրառում:
9. Ներդնել մեխանիզմ՝ ապահովելու համակարգված մոտեցում, որը թույլ կտա ՊՎԾ-ին իր տարեկան ուսումնասիրությունների ծրագրերը համադրել այլ մարմինների (այդ թվում՝ ՊՀԴ և ԿՏՄ) աշխատանքների հետ, այլ ոչ թե յուրաքանչյուր անգամ ուսումնասիրությունը կամ վերահսկողությունն իրականացնել առանձին հանձնարարականի հիման վրա՝ առանց առնչվելու պետությունում գործող ընդհանուր համակարգի այլ կառույցների գործողություններին: Միաժամանակ՝ ԿՏՄ ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներն իրենց հերթին նաև օգտակար տվյալներ կարող են հանդիսանալ հնարավոր ռիսկերի բացահայտման ուղղությամբ, և կիրառվել ինչպե՛ս ՀՊ-ի կողմից հաշվեթևությունների պլանավորման փուլում, այնպե՛ս էլ ԱԺ-ի և Կառավարության կողմից վերահսկողական միջոցառումների իրականացման շրջանակներում:

⁸¹ Համաձայն ՀՊ կողմից տրամադրված տեղեկատվության՝ մշակվել է ՀՀ արտաքին պետական հաշվեթևության ոլորտի իրավական բարելավումների հայեցակարգ, որը նախատեսում է հետհսկողական գործընթացը սահմանել որպես հաշվեթևության բաղկացուցիչ մաս:

ՀՀ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն (1995, 2005 և 2015թթ. խմբագրությամբ)
2. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք (1997)
3. «Ներքին առևտրի մասին» ՀՀ օրենք (2010)
4. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք (2016)
5. ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 267-Ն որոշում (2016)
6. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք (2018)
7. «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք (2018)
8. ՀՀ կառավարության «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ N136-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2022թ. բյուջետային ուղերձ (2021)
10. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի ապրիլի 22-ի «Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 102-Լ որոշում
11. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 105-Լ որոշման հավելված
12. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հունիսի 30-ի «Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 146-Լ որոշում
13. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի «ՀՀ արտաքին պետական հաշվեքննության ոլորտի իրավական բարելավումների հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 187-Լ որոշում
14. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2023 թվականի մարտի 16-ի թիվ N-351-Լ որոշում

Պետական կառույցների ղեկույցներ, հրապարակումներ

15. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նիստեր,
<https://www.youtube.com/@ParliamentofArmenia>
16. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման արդյունավետության գնահատում, Երևան, 2021, <https://escs.am/files/files/2021-05-27/4a407f884d7ec3d7d441bde861c4c05b.pdf>
17. ՀՀ հաշվեքննիչ պալատ, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հրապարակված ընթացիկ եզրակացություններ
18. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ վիճակագրական տարեգիրք 2023

Այլ կազմակերպությունների զեկույցներ և հրապարակումներ

19. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ, «Երևանի հանրակրթական հիմնական դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկում և գնահատում», Երևան, 2014, <https://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Analysis-of-Financial-Management-of-12-Yerevans-Mainstream-Schools.pdf>
20. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, «Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում», Երևան, 2014, <https://www.osf.am/wp-content/uploads/2013/11/State-Policy-on-General-Education-Financing.pdf>
21. Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, «Ինչպե՞ս բարելավել դպրոցի ներքին գնահատումը. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ներքին գնահատման քաղաքականության և վերջինիս իրականացման ուսումնասիրություն», Երևան, 2021, <https://epfarmeria.am/hy/documents/DATA-Research-Internal-Evaluation-of-Secondary-Schools-Khachatryan>
22. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Խորհրդարանի կողմից ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ թույլ վերահսկողության պատճառների և հետևանքների վերհանում», Երևան, 2022, <https://transparency.am/hy/publication/294>
23. Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն, «Հայաստանում կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում», Երևան, 2018, https://policyobserver.am/wp-content/uploads/Book4_Krtutyun.pdf
24. Միջազգային բյուջետային գործընկերություն, «Բաց բյուջեների հետազոտություն», Հայաստան, 2021, <https://transparency.am/hy/publication/pdf/283/9819>
25. Babbie, E. *The Practice of Social Research*, Cengage AU, 2020
26. Court of Audit (Tribunal de Cuentas), <https://www.tcu.es/en/>
27. Court of Auditors (Cour des comptes), <https://www.ccomptes.fr/sites/default/files/2018-01/Professional-Standards-201712.pdf>
28. Federal Court of Auditors (Bundesrechnungshof), https://www.bundesrechnungshof.de/DE/5_ueber_uns/1_wer_wir_sind/wer_wir_sind_nod_e.html
29. GAO Reports and Testimonies, <https://www.gao.gov/assets/2019-11/675709.pdf>
30. GAO's High-Risk List, <https://www.gao.gov/highrisk>
31. IFPP, *International Standards of Supreme Audit Institutions*, <https://www.issai.org/professional-pronouncements/>
32. INTOSAI, Performance Audit Subcommittee – PAS, *The Situation-Complication-Cause-Consequence Technique, Designing Performance Audits – Setting Audit Questions. Performance Audit Sub-committee*, https://afrosai-e.org.za/wp-content/uploads/2019/04/PAS-Guideline-5-Designing-Performance-Audits-20131_00.pdf
33. National Audit Office (NAO), *Reports and Publications*, https://www.nao.org.uk/wp-content/uploads/sites/29/2020/01/Code_of_audit_practice_2020.pdf

34. OECD, *Good Practices in Supporting Supreme Audit Institutions*,
<https://www.oecd.org/dac/effectiveness/Final%20SAI%20Good%20Practice%20Note.pdf>
35. Swedish National Audit Office (Riksrevisionen), <https://www.riksrevisionen.se/om-riksrevisionen/riksrevisionens-uppgifter/granskingsmetoder/arlig-revision.html>
36. Swedish Parliament (Riksdag) - Committee on Finance, <https://www.riksdagen.se/en/how-the-riksdag-works/committees/finance-committee/>
37. The World Bank, *Sourcebook of 21 Social Accountability Tools*, Nepal, 2012,
<https://documents.worldbank.org/pt/publication/documents-reports/documentdetail/513571468059674130/sourcebook-of-21-social-accountability-tools>
38. UK Parliament - Public Accounts Committee,
<https://committees.parliament.uk/committee/127/public-accounts-committee/>
39. UNDP, *Fostering Social Accountability: from Principle to Practice Guide*, 2010,
https://www.shareweb.ch/site/DDLGN/Documents/UNDP_Fostering%20Social%20Accountability-Guidance%20Note_2010.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Հանրակրթություն» ծրագրի հիմնական ֆինանսական ցուցանիշները

Միջոցառման անվանումը	2020	2021	2022
Հիմնական ընդհանուր հանրակրթություն	39,589,507.7	39,391,247.4	42,363,499.1
Տարրական ընդհանուր հանրակրթություն	29,915,803.6	33,740,336.1	33,746,482.3
Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն	19,024,051.7	16,791,005.1	17,072,160.0
Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն	1,465,582.4	1,828,362.1	1,754,759.1
Հիմնական մասնագիտացված հանրակրթություն	1,077,554.8	1,593,022.5	1,650,288.3
Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում	767,238.0	912,613.0	891,955.9
Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում	585,914.0	731,222.8	848,010.9
Նախադպրոցական կրթություն	798,543.9	832,810.8	819,201.7
Գնահատման և թեստավորման ծառայություններ		500,880.9	545,524.5
«Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում	14,700.0	185,147.1	538,160.9
Հիմնական հատուկ հանրակրթություն	553,027.0	512,191.0	515,132.2
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում			472,434.5
Միջնակարգ հատուկ հանրակրթություն	427,580.7	337,963.6	353,979.8
2022 թվականին ՀՀ-ում կենսաբանության միջազգային օլիմպիադայի նախապատրաստում	17,630.2	33,405.4	320,110.4
Տարրական հատուկ հանրակրթություն	348,395.0	329,640.5	300,687.3
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	291,757.0	285,183.9	285,342.6
Տարրական մասնագիտացված հանրակրթություն	216,619.4	254,583.7	215,801.0
Մանկապարտեզների գույքով ապահովում			166,572.0
Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում	127,454.7	126,383.6	118,413.8
Ներդրումներ 2022 թվականին ՀՀ-ում կենսաբանության միջազգային օլիմպիադայի անցկացման նպատակով			104,332.6
Դպրոցականների օլիմպիադաների անցկացում	31,430.0	29,065.0	43,100.0
Հանրակրթական դպրոցների աշակերտներին անվանական կրթաթոշակի տրամադրում	32,880.0	37,260.0	38,310.0

Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում			33,832.2
Սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում		35,212.4	33,084.5
Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում	50,525.0	32,545.1	25,639.3
Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)	16,217.0	15,733.4	16,213.7
Նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելների ներդրում	-	77,274.3	7,737.0
«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում	7,766.5	7,701.3	7,701.3
Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին	43,135.4	22,643.0	6,275.6
Օժանդակություն «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամին	23,555.9	12,865.0	-
«Ուսուցչի օրվա» առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրում	20,790.0	-	11,000.0
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	160,144.0	401,578.0	
Նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ապահովում		11,955.6	
Ներառական կրթություն ավագ դպրոցում	47,934.9	30,873.6	
Ներառական կրթություն միջին դպրոցում	319,127.0	195,141.1	
Ներառական կրթություն տարրական դպրոցում	200,854.1	114,613.4	
Ուսուցչի օրվա առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների լավագույն մանկավարժների պարգևատրում		11,000.0	
Սոցիալապես անապահով և սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	27,054.6		

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հանրակրթություն ծրագրի միջոցառումների արդյունքային ցուցանիշները

Միջոցառման անվանումը	Արդյունքի չափորոշիչը	2020	2021	2022
Տարրական ընդհանուր հանրակրթություն	Տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների թիվը, մարդ	153501	153618	155529
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	8	7	7
Հիմնական ընդհանուր հանրակրթություն	Հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	171406	176144	179862
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	7	7
Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն	Միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	64964	65412	69118
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	7	7
Տարրական հատուկ հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	232	181	181
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	7	7	7
Հիմնական հատուկ հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	331	217	213
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	7	7
Միջնակարգ հատուկ հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	223	203	225
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	7	7
Ներառական կրթություն տարրական դպրոցում	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	356	206	
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	8	8	

Ներառական կրթություն միջին դպրոցում	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	541	340	
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	8	
Ներառական կրթություն ավագ դպրոցում	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	78	61	
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	13	8	
Տարրական մասնագիտացված հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	346	354.3	333.7
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	8	8	8
Հիմնական մասնագիտացված հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	1520	1974.3	1898
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	14	8	8
Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն	Սովորողների միջին տարեկան թիվը, մարդ	1429	1523	1601
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	14	8	8
Նախադպրոցական կրթություն	Ծառայությունը ստացող երեխաների միջին տարեկան թիվը, մարդ	7731	7863	8020
Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում	Սովորողների թիվը, մարդ	6000	6000	6000
	Այլ դպրոցներում տեղայնացված ծրագրերի թիվը, հատ	14	8	8
Դպրոցականների օլիմպիադաների անցկացում	Հանրապետական առարկայական օլիմպիադաների թիվը, հատ	16	16	16
	Միջազգային առարկայական օլիմպիադաների թիվը, հատ	7	7	7
	Միջազգային առարկայական օլիմպիադաներում մեդալակիրների թիվը, մարդ	12	12	12

Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում	Տարրական դասարանների սովորողներին տրվող դասագրքերի և վարժությունների տետրերի թվաքանակ, հատ	590000	817310	786750
Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում	Ավարտական փաստաթղթեր, հատ	63730	65600	69600
	Դասամատյաններ, հատ	21710		
	Պերագանցության մեդալներ, հատ	120	120	120
	ԿԳՄՆ հուշամեդալ, հատ	70	70	70
	Մանկավարժական և կրթական պարբերականներ, անվանում	8	8	8
	Գովասանագրեր, հատ	60164	68500	68500
	Ուսումնադիտողական պարագաներ, անվանում	6	6	6
	Պաստառներ, անվանում	10	13	13
	Ամսագրեր, անվանում	4	4	4
Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում	Ռոբոտաշինության խմբակների թիվը, հատ	30		
	Ինժեներական լաբորատորիաների թիվը, հատ	676	760	760
«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում	Վերապատրաստված ուսուցիչների թիվը, մարդ	100	100	100
Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)	Ծառայությունը ստացող սովորողների թվաքանակը, մարդ	37	23	23
	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը	4.5	4.5	4.5
2022 թվականին ՀՀ-ում կենսաբանության միջազգային օլիմպիադայի նախապատրաստում	Միջազգային օլիմպիադաների թիվը, հատ	1	1	1

Փոխհատուցում ՀՀ հեռավոր՝ սահմանամերձ՝ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի մանկավարժներին	Շահառուների թիվը, մարդ	259	259	259
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	Հանրակրթական դպրոցների թիվը, հատ	749	837	880
	Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացող դպրոցահասակ երեխաների թիվը, մարդ	865	1746	2017
	Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացող մանկավարժների թիվը, մարդ	3078	3958	4355
Սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	Սահմանամերձ համայնքների դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողների թիվը, մարդ	5046	5558	6114
	Սահմանամերձ համայնքների դպրոցների թիվը, հատ	45	44	44
	Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների թիվը, հատ	38	37	37
	Անապահով ընտանիքների երեխաների թիվը, մարդ	125		
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	Որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների թիվը, մարդ	2075	2079	2570
Նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելների ներդրում	Նախադպրոցական այլընտրանքային ծառայություն մատուցող համայնքների թիվը, հատ	60	60	71
	Ընդգրկված երեխաների թիվը, մարդ	900	900	900
Հանրակրթական դպրոցների աշակերտներին անվանական կրթաթոշակի տրամադրում	Օլիմպիադաների թիվը, հատ	4	5	5
	Հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողների և միջազգային օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցների թիվը	368	402	402

Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում	Մանկապարտեզների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները, հատ		1	
Գնահատման և թեստավորման ծառայություններ	Միջնակարգ դպրոցի պետական ավարտական քննություններին մասնակցողների թիվը (ՀՀ ԿԳ նախարարի 03.05.2012թ.-ի N388-Ն հրամանի համաձայն)		21489	32198
	Հիմնական դպրոցի ավարտական քննություններին մասնակցողների թիվը (ՀՀ ԿԳ նախարարի 03.05.2012թ.-ի N388-Ն հրամանի համաձայն)		32788	34749
	«Պատիվ ունեմ» ծրագրի մասնակցողների թիվը		1000	1500
	Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցողների թիվը (ՀՀ կառավարության 14 ապրիլի 2004թ.-ի N586-Ն որոշման համաձայն)			14000
	TIMSS PIRLS-2021 փորձնական փուլի ապահովման համար անդամակցության վճար		1	1
	Ազգային ստուգատեսին մասնակցողների թիվը (ՀՀ կառավարության 14 ապրիլի 2004թ.-ի N586-Ն որոշման համաձայն)		4000	5000
	Նյութերի (թեստեր և բուկլետներ) տպագրություն (թեստերի և բուկլետների քանակ)		7500	7500

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունները

Հ/Հ	Հաշվեքննության առարկա	Հաշվեքննության հիմք	Հաշվեքննության կատարման ժամկետ	Հաշվեքննության ընդգրկող ժամկետ	Ընթացիկ եզրակացության հաստատման ամսաթիվը	Առաջարկությունների քանակը
1	2020 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 26.05.2020թ. թիվ 85-Ա որոշում	08.06.2020-31.07.2020թթ.	01.01.2020-31.03.2020թթ.	ՀՊ 30.07.2020թ. թիվ 120-Ա	4
2	2020 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 04.08.2020թ. թիվ 144-Ա որոշում	17.08.2020-30.09.2020թթ. 20.11.2020-21.12.2020թթ.	01.01.2020-30.06.2020թթ.	ՀՊ 25.12.2020թ. թիվ 237-Ա	6
3	2020 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 20.11.2020թ. թիվ 191-Ա որոշում	27.11.2020-03.12.2020թթ. 25.12.2020-31.01.2021թթ.	01.01.2020-30.09.2020թթ.	ՀՊ 25.02.2021թ. թիվ 42-Ա	9
4	2020 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 10.02.2021թ. թիվ 32-Ա որոշում	15.02.2021-30.04.2021թթ.	01.01.2020-30.12.2020թթ.	ՀՊ 30.04.2021թ. թիվ 112-Ա	7
5	2021 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 11.05.2021թ. թիվ 128-Ա որոշում	15.05.2021-30.07.2021թթ.	01.01.2021-31.03.2021թթ.	-	4

6	2021 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 02.08.2021թ. թիվ 216-Ա որոշում	09.08.2021-29.10.2021թթ.	01.01.2021-30.06,2021 թթ,	ՀՊ 29.10.2021թ. թիվ 279-Ա	4
7	2021 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 13.10.2021թ. թիվ 252-Ա որոշում	18.10.2021-31.01.2022թթ.	01.01.2021-30.09,2021 թթ,	ՀՊ 27.01.2022թ. թիվ 10-Ա	6
8	2021 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 04.02.2022թ. թիվ 29-Ա որոշում	14.02.2022-29.04.2022թթ.	01.01.2021-31.12,2021 թթ,	ՀՊ 05.05.2022թ. թիվ 118-Ա	8
9	2022 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 22.04.2022թ. թիվ 94-Ա որոշում	02.05.2022-29.07.2022թթ.	01.01.2022-31.03,2022 թթ,	ՀՊ 27.07.2022թ. թիվ 172-Ա	1
10	2022 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 27.07.2022թ. թիվ 152-Ա որոշում	03.08.2022-31.10.2022թթ.	01.01.2022-30.06,2022 թթ,	ՀՊ 24.11.2022թ. թիվ 225-Ա	2
11	2022 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 27.10.2022թ. թիվ 206-Ա որոշում	05.11.2022-31.01.2023թթ.	01.01.2022-30.09,2022 թթ,	ՀՊ 25.01.2023թ. թիվ 13-Ա	5
12	2022 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	ՀՊ 22.12.2022թ. թիվ 244-Ա որոշում	03.01.2023-30.04.2023թթ.	01.01.2022-31.12,2022 թթ,	ՀՊ 26.04.2023թ. թիվ 70-Ա	2

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեթևությունների արդյունքում
ներկայացված այլ գրավոր տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տեղեկություն

Հ/Հ	Հաշվեթևության առարկա	Ընթացիկ եզրակացությունը հաշվեթևության օբյեկտին ուղարկելու գրության ամսաթիվ	Հաշվեթևության օբյեկտից 30 օրյա ժամկետում ստացված պատասխան գրության ամսաթիվ
1	2020 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	31.07.2020թ.	31.08.2020թ.
2	2020 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	25.12.2020թ.	չի ստացվել
3	2020 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	26.02.2021թ.	29.03.2021թ.
4	2020 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	04.05.2021թ.	07.06.2021թ.
5	2021 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	02.08.2021թ.	03.09.2021թ.
6	2021 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	01.11.2021թ.	01.12.2021թ.
7	2021 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	31.01.2022թ.	10.03.2022թ.
8	2021 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	11.05.2022թ.	16.06.2022թ.

9	2022 թվականի պետական բյուջեի 3 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	01.08.2022թ.	02.09.2022թ.
10	2022 թվականի պետական բյուջեի 6 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	29.11.2022թ.	27.12.2022թ.
11	2022 թվականի պետական բյուջեի 9 ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	27.01.2023թ.	24.02.2023թ.
12	2022 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	28.04.2023թ.	29.05.2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 5. 2020-2022թթ. ընթացքում ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունները

Հ/Հ	Անվանում և հղում
1	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
2	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2022 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
3	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
4	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2022 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
5	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
6	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
7	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը հաստատելու մասին
8	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
9	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
10	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
11	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության վերաբերյալ
12	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Տեղեկատվության ստացման նպատակով կիրառված հարցաթերթերը

ՀՀ հաշվեքննիչ պալատ

1. Համաձայն Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացությունների՝ Հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության ծրագրի նկատմամբ իրականացված հաշվեքննությունների համար որպես հաշվեքննության ծածկույթ սահմանվել է ԿԳՄՍՆ-ը՝ որպես բյուջետային ծրագրերի կատարող, այլ ոչ թե որպես պատասխանատու մարմին: Խնդրում ենք տրամադրել իրավական հիմնավորում և տեղեկատվություն, թե ինչո՞վ է պայմանավորված ԿԳՄՍՆ-ը՝ որպես ծրագրերի կատարող, այլ ոչ թե որպես պատասխանատու հաշվեքննության ենթարկելը:
2. Համաձայն Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացությունների՝ Հաշվեքննիչ պալատի կողմից տարեկան ծրագրի 1-ին կետով իրականացված հաշվեքննությունների շրջանակներում առաջարկությունները ներկայացվում են ընդհանուր համարակալմամբ: Արդյո՞ք առկա է ներքին իրավական ակտերով սահմանված և/կամ կիրառվող մեթոդաբանություն՝ առաջարկությունների դասակարգման համար (օրինակ՝ քաղաքականությանը միտված, խնդրին միտված, գործընթացներին միտված և այլն), և որքանով է դա կիրառելի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննությունների ժամանակ:
3. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները պետք է պարունակեն «Հետիսկողական գործընթաց» վերնագրով բաժին, որը ներկայացվում է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմելիս, որի տեղեկատվության ներկայացման համար առաջարկվում է հաշվեքննության օբյեկտից հարցում իրականացնելու համար կիրառել ուղեցույցի 2և 3-ով ներկայացված ձևաչափը: Հաշվի առնելով որ 2019-2022թթ. ԿԳՄՍՆ վերաբերյալ հրապարակված ընթացիկ եզրակացություններում բացակայում է նշված ձևաչափին համապատասխան բաժինը, խնդրում ենք պատասխանել ա) արդյո՞ք ՀԴ-ն ԿԳՄՍՆ-ին ներկայացրել է նշված ձևաչափով տեղեկատվություն ներկայացնելու պահանջ, բ) արդյո՞ք ԿԳՄՍՆ-ը տեղեկատվությունը ներկայացրել է սահմանված ձևաչափով և սահմանված ժամկետում, գ) խնդրում ենք տրամադրել հարցման, ինչպես նաև դրա վերաբերյալ ԿԳՄՍՆ կողմից տրված պատասխան պաշտոնական գրությունների պատճենները:
4. Արդյո՞ք Հաշվեքննիչ պալատն ունի համապատասխան վիճակագրություն ներկայացված առաջարկությունների ընդունման և դրանց իրականացման ընթացքի վերաբերյալ, մասնավորապես՝ յուրաքանչյուր հաշվեքննության արդյունքներով քանի՞ առաջարկություն է ներկայացվել, դրանցից քանի՞սն են ընդունվել և ընդունված առաջարկություններից քանի՞սն են իրագործվել և քանի՞սն են գտնվում ընթացքի մեջ: Խնդրում ենք տրամադրել տեղեկատվությունը և առկայության դեպքում

փաստաթղթերի պատճենները:

5. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում Հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: Արդյո՞ք ԿԳՄՍՆ-ը 2019-2022թթ. ընթացքում բոլոր եզրակացությունների համար սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան տեղեկատվություն, և ինչպիսի՞ ժամանակային շեղումներ են արձանագրվել: Խնդրում ենք տրամադրել նաև նշված ժամանակահատվածում ԿԳՄՍՆ-ում իրականացված բոլոր հաշվեքննությունների վերաբերյալ ԿԳՄՍՆ կողմից ներկայացված ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությունները:
6. Առաջարկությունների իրականացման վերաբերյալ ներկայացված միջոցառումների նկատմամբ ինչպիսի՞ գործնական մեխանիզմներ են առկա Հաշվեքննիչ պալատի գործիքակազմում, և արդյո՞ք 2019-2022թթ. ընթացքում առկա են ԿԳՄՍՆ-ում հետհսկողական գործընթացի վերաբերյալ գնահատականներ կամ արձանագրումներ: Առկայության դեպքում խնդրում ենք տրամադրել պատճենները:
7. Իրականացվող հետհսկողական գործընթացի փաստաթղթավորման ինչպիսի՞ ներքին կարգավորումներ են առկա: Խնդրում ենք տրամադրել համապատասխան առկա կարգավորումները և դրանց հիման վրա 2019-2022 թթ. ԿԳՄՍՆ-ում իրականացված հետհսկողական գործընթացի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները:
8. ԿԳՄՍՆ-ում 2019-2022թթ. ընթացքում իրականացված հաշվեքննությունների պլանավորման փուլում արդյո՞ք կիրառվել են ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված ուսումնասիրությունների և Կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները: Խնդրում ենք տրամադրել 2019-2022 թթ. ԿԳՄՍՆ-ում իրականացված հաշվեքննությունների առաջադրանքները և հաշվեքննությունների պլանները:
9. ԿԳՄՍՆ-ում 2019-2022թթ. ընթացքում իրականացված հաշվեքննությունների պլանավորման և իրականացման գործընթացում արդյո՞ք կիրառվել են հաշվեքննության օբյեկտի ներքին աուդիտի հաշվետվությունները: Խնդրում ենք տրամադրել դրանց կիրառման վերաբերյալ տեղեկատվություն և համապատասխան փաստաթղթերի պատճենները:
10. Հետհսկողական մեխանիզմի բարելավման ինչպիսի՞ հնարավորություններ են առկա ինչպե՞ս օրենսդրական մակարդակում, այնպե՞ս էլ ներքին իրավակարգավորումների և դրանց կիրառման մակարդակներում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

11. ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» թիվ 311-Ա հրամանի Հավելված 1-ի 9-րդ բաժնի համաձայն՝ Բյուջետային ծրագրերի անձնագրերը մշակվում են այդ ծրագրերի իրականացման համար պատասխանատու պետական մարմինների կողմից և ՀՀ ՖՆ են ներկայացվում ՄԺԾԾ հայտերի հետ մեկտեղ: Ծրագրի անձնագրեր պետք է մշակվեն բյուջետային բոլոր ծրագրերի համար (բացառությամբ վարչական բնույթի ծախսային ծրագրերի): Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք տրամադրել Հանրակրթության ծրագրի համար 2019-2022թթ. մշակված և հաստատված անձնագրերը:
12. Համաձայն ԿԳՄՍՆ կանոնադրության 11-րդ կետի 9-րդ ենթակետի՝ Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է իր ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերի և բաժնեմասերի կառավարումը, իր ենթակայության կազմակերպություններում կատարում է ֆինանսատնտեսական ու արտադրական գործունեության փաստաթղթային ուսումնասիրություններ և վերստուգումներ (աուդիտ), իրականացնում վերահսկողություն բյուջետային միջոցների ծախսման և պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ օգտագործման նկատմամբ: Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն 2019-2022թթ. ընթացքում վերահսկողության նպատակով ԿԳՄՍՆ-ում գործող ընթացիկ հսկողական մեխանիզմի ձևավորման, կիրառման և արդյունքների վերաբերյալ: Մասնավորապես՝ ինչպիսի՞ մեխանիզմ է գործում, ինչպիսի՞ ստուգումներ կամ ուսումնասիրություններ են իրականացվել, դրանց արդյունքներն ինչպե՞ս են փաստաթղթավորվել: Խնդրում ենք տրամադրել համապատասխան իրավական փաստաթղթերի և արդյունքների վերաբերող փաստաթղթերի պատճենները:
13. ԿԳՄՍՆ-ն Հանրակրթության ծրագրի իրականացման պատասխանատուն է, ինչը նշանակում է, որ ոլորտում գործողություն ներկայացնող կազմակերպություններն իրենց պետական բյուջեի հաշվետվությունները (այդ թվում՝ արդյունքային ցուցանիշների վերաբերյալ) ներկայացնում են ԿԳՄՍՆ : Ներկայացված հաշվետվությունների ճշմարտացիության մեջ համոզվելու համար ԿԳՄՍՆ-ն ինչպիսի՞ գործիքակազմ ունի և ինչպե՞ս է հավաստիանում ներկայացված հաշվետվությունների ճշմարտացիության մեջ:
14. Խնդրում ենք տրամադրել 2019-2022թթ. ընթացքում ներքին աուդիտի համար կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի և հանձնման ընդունման արձանագրությունների պատճենները, յուրաքանչյուր տարվա ներքին աուդիտի ծրագիրը, ներքին աուդիտի կողմից ներկայացված հաշվետվությունները և ղեկավարությանը ներկայացված նամակները, ինչպես նաև ներքին աուդիտի կողմից հանրակրթության ոլորտի կազմակերպություններում իրականացված աուդիտների հաշվետվությունների պատճենները:

15. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում Հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: 2019-2022թթ. ընթացքում Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների իրականացման նպատակով ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվել: Խնդրում ենք տրամադրել նաև տեղեկատվություն դրանցից յուրաքանչյուրի իրականացման ընթացքի կամ չիրականացման պատճառների վերաբերյալ:
16. Համաձայն Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցի 1-ին մասի 9-րդ կետի՝ հետհսկողական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նպատակով հաշվեքննության օբյեկտից հարցում իրականացնելու համար կիրառել ուղեցույցի 2և 3-ով ներկայացված ձևաչափը: Հաշվի առնելով, որ 2019-2022թթ. ԿԳՄՍՆ վերաբերյալ հրապարակված ընթացիկ եզրակացություններում բացակայում է նշված ձևաչափին համապատասխան բաժինը, խնդրում ենք պատասխանել ա) արդյո՞ք ԿԳՄՍՆ-ը ստացել է նշված ձևաչափով տեղեկատվություն ներկայացնելու պահանջ, բ) Արդյո՞ք ԿԳՄՍՆ-ը տեղեկատվությունը ներկայացրել է սահմանված ձևաչափով և սահմանված ժամկետում, գ) խնդրում ենք տրամադրել հարցման, ինչպես նաև դրա վերաբերյալ ԿԳՄՍՆ կողմից տրված պատասխանների պաշտոնական գրությունների պատճենները:

ՀՀ Ազգային ժողով

17. Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ Հաշվեքննիչ պալատն ընթացիկ եզրակացությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն:
18. Ինչպիսի ընթացակարգեր են նախատեսված և գործնականում ի՞նչ գործողություններ է հաջորդում դրան:
19. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն Հաշվեքննիչ պալատն այլ գրավոր տեղեկատվությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը և ներկայացնում Ազգային ժողով և Կառավարություն: Ինչ ընթացակարգեր են նախատեսված և գործնականում ինչպիսի՞ գործողություններ են հաջորդում դրան:

20. Ինչպե՞ս է ԱԺ հանձնաժողովի կողմից ընտրվում հանձնաժողովի նիստում քննարկման ենթակա Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները:
21. Արդյո՞ք առկա է որևէ փաստաթղթավորում (սղագրում կամ համառոտագրում) Հաշվեքննիչ պալատի եզրակացության քննարկման նիստի ընթացքում իրականացված քննարկումների վերաբերյալ, և արդյո՞ք առկա է քննարկման արդյունքների իրագործման որևէ սահմանված մեխանիզմ:
22. Արդյո՞ք և ինչպե՞ս (ինչպիսի գործիքակազմով) է ԱԺ-ն՝ ի դեմս մշտական հանձնաժողովների կամ այլ կառուցվածքային ստորաբաժանումների, իրականացնում Հաշվեքննիչ պալատի եզրակացությունների քննարկման նկատմամբ հետհսկողական գործընթաց:
23. Արդյո՞ք և ինչպե՞ս է Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները քննարկվում ԱԺ հանձնաժողովների նիստերում, բերվում հանձնաժողովի նիստի օրակարգ տարբեր հանձնաժողովների/պատգամավորների կողմից, և ի՞նչ հետագա քայլեր է քննարկումը նախատեսում:

ՀՀ կառավարություն

24. Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ Հաշվեքննիչ պալատն ընթացիկ եզրակացությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով և Կառավարություն, ինչպիսի՞ ընթացակարգեր են նախատեսված, և ի՞նչ գործողություններ է հաջորդում դրան:
25. Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն այլ գրավոր տեղեկատվությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը և ներկայացնում Ազգային ժողով և Կառավարություն:
26. Առկա՞ է տեղեկատվություն Գործադիր մարմնի կողմից Հաշվեքննիչ պալատի առաջարկությունների վրա հիմնված նախաձեռնությունների կամ հանձնարարականների և դրանց ընթացքի նկատմամբ իրականացված հսկողության վերաբերյալ:

ՀՀ պետական վերահսկողության ծառայություն

27. Խնդրում ենք տրամադրել 2019-2022թթ. ընթացքում հանրակրթության ոլորտում ՊՎԾ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:
28. Արդյո՞ք ՊՎԾ-ն Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացված հաշվեքննությունների և ԿՏՄ ստուգումների արդյունքները կիրառում է ուսումնասիրությունների իրականացման պլանավորման և իրականացման ժամանակ: